

3793

280.6

4-14

4. Молча

1853

2010

4 B 2001



ԿԵԹՈՂՈՍԷՆԻ ՈՒՂՂՔՓԵՍ ԷԼՅՈՑ  
ՏՆՈՒՊԱՆՔԻՆ ԿՐԸՅ

ՔԵՆԵ ՍԸ ՄՏԵՐՄԵԿԵՆ

ԽՈՒՄՆԱԳԻՆՆԵՐԻ ԿՐԸՅ

« Այսուհետև զգոյշ լերուք յանօ-  
գուտ քրիմիքնէ, և ի բամբասանաց  
խնայեցէք զեզու. զի շուրջ զազանի  
գատարկ ոչ անցցէ, և բերան ստա-  
խտ սղանանէ զանձն: »

Իմաստութիւն, Թ. 11:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ս. ՊԵՆԷՏԻՈՒՍ ՏՊԱՐԱՆԻ:

1853.

281.6  
4-14

23140

2281  
40

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher due to the bleed-through effect.

1823

Handwritten text, possibly a signature or date, located below the bleed-through.

Handwritten mark or signature in blue ink, possibly a circular stamp or initials.

Քանի ինչ Սրբազան Խորհրդածութիւններ անուամբ Տեորա-  
կը մեր Միւսնին առաջարկուելով քննուեցաւ, և անպատ-  
շաճ բան մը չի գտնուեցաւ, այլ մանաւանդ չի գիտցողնե-  
րուն միտքը լուսաւորելու և սրտերնին հանգչեցնելու բա-  
ւական սեպուեցաւ, որով և Միւսնէս ալ հրաման տրու-  
եցաւ հրատարակուելուն:

Վ=Պօլէս Յունիս 20<sup>o</sup> 1853:

Յ: Վ: ՊՕՐԿՕՆԵՆ.  
Արեւարդիլ Ապագահական:





կուր, նաեւ նոյն իսկ հրապարակական տեղումք ու նոյն իսկ ընտանեաց մէջ տեսնալը շատ ողբալի բան է՝ մի : Ասանկ ըլլալուն բնաւ երկբայութիւն չի կար. որովհետեւ անխորհուրդ ու անհիմն վարմունքի մը հետեւութիւնները ուրիշ՝ բան չէին կրնար ըլլալ : Ուստի և երթալով ալ առաջ եկան ան ողբալի բաժանմունքները, մեկզմէ կ'բաժնատեւը, ներքին կուրները, ու անոնց պատճառները աւելորդաբանութեամբ ուրիշ աղբաց ալ յայտնելը, իրար խայտառակելը, նոյնպէս երգիծաբանութիւնները, անիրաւ ու անճոռնի դատողութիւնները, կերպ կերպ անվայել հեգնութիւնները, անտեղի զուրջուածները, ծածուկ ու հրապարակական սպառնալիքները, ծանր ու նենգաւոր զրպատութիւնները ու խորամանկ ամբաստանութիւնները : Այս վիճակիս մէջ զՎզբ աւելի շփոթող կիրքերնալ գրգռուելով, ու հրապարակական տեղումնց և անձանց և կարգի ու պաշտօնի սրբութեան նկատմունքը մէկ դի գրուելով, կերպ կերպ նախատինքներ 'ի գործ գրուեցան : Մեծն ու պզտիկը, Վկեղեցականն ու աշխարհականը՝ անխորհուրդ մարդոց առջին՝ խտրութիւն մը չ'ընելով՝ ամէնը մէկ եղաւ . ու ապ երկպառակութիւնը աւելի սատկացնելու, ու ժողովուրդը աս ալէկոծութեան մէջ պահելու համար և ոչ միջոցի մը խնայուեցաւ : անարգական յայտարարութիւններ, անանուն ծանուցումներ ասդիս անդին կերպ կերպ ու որ և իցէ աղբէ և կրօնքէ եղող՝ անձանց ձեռքը տեսնուեցան : Եւ որ աւելի ցաւալին ե գտնուեցան այնպիսի անձիք ալ որ աս բաներուն ամենեւին վերաբերութիւն մը չ'ունենալով ու՝ բուն իրաց էութեան ալ տեղեակ չ'ըլլալով՝ Վզբին պատուոյն դէմ, անոր եղկելի վիճակը տեղ տեղ, և ուրիշ աղբաց պոջին, ու հեռու տեղեր օտար լրագիրներու մէջ ալ՝ անոր դժբաղդ վիճակը, բուն իսկ իրաց ճշմարտութիւնը շինծու պատմութիւններով ալ խարդախելով դժադրել տուին : որպէս զի չգիտցող

ներուն աչքը ներկեն, ու իրենց ատելի երեցող թէպէտ և սրբազան անձանց ալ յարդն ու պատիւը ուրիշներուն առջև աւրեն: Այս ամէն անկարգութիւնները տեսնուած ատեն որ բարեսիրտ անձը կրնար իր սրտին հառաչանքը զսոյել՝ մանաւանդ երբոր խնցուեցաւ թէ կրօնական ու հոգևոր ինդիւիդներու ալ միջամուխ ըլլարու, և նոյն իսկ եկեղեցական իշխանութեան սեպհական ու անբռնաբարելի ազատութեանը դէմ՝ թէ առանձնական թէ հրապարակական ճգանքն ու միջոցները գործքի դնելով քաղաքական իշխանութեան ու նոյն իսկ Տէրութեան ալ դանդատ ընելու, ու ներքութիւն տալու համարձակուէր է, որն որ բոլոր կաթողիկոսաց ալ հանդարտ ու հանգիստ ըլլալուն ու իր ամէն հպատակներուն առատաձեռնած կրօնական ազատութեան ատոնց ալ համարձակ վայելելուն այնչափ հոգ ու խնամ՝ ու նենարուն համար՝ անշուշտ շատ մեծ ցաւ կրողար աս ժողովուրդին ան խեղճ վիճակը՝ ու աս անխորհուրդ ընթացքը տեսած ատենը:

Սակայն անկողմնակից անձինք Աղբերնուս կրօնական ու քաղաքական յարդն ու պատիւը խանգարող ատ անտեղի վարմունքները ու ատչափ խառնակ դէպքերը քննած ատեննին կը հասկընային որ աս անտեղութիւնները ըստ մեծի մասին բուն իսկ իրաց վիճակը չի ճանցուելէն կամ անհաւատարիմ հճճանքներէ պատճառուած կ'ըլլան: Ուստի նոյն ժողովուրդեան կրօնական և բարեսիրտ սգին քաջածանօթ ըլլալով՝ վստահ էին որ երբ բուն իրաց վիճակը ամենուն յայտնուելու ըլլայ ատ խառնակութիւնները թէ բոլորովին չի վերցուէին ալ նէ գոնէ շատ տարբեր կըլլային: Բայց կը մտածէին ալ որ մեկովեկու ետևէ վրայ եկած այդչափ շփոթութեանց ու աղմկի մեջ սր և իցէ համոզական ձայն մը անխելի կ'ըլլար, ատոր համար գոնէ քիչը հանդարտ ժամանակի մը կը սպասէին:

Ուստի Ազգերնուսյարգն ու պատիւը ուղղելու և կրօնական քանի մը գլխաւոր տեսական խնդիրներու վրայօք բուն իրաց որպիսութիւնը բացատրելու համար աս վերջի ժամանակներս Վիէնայու Յ. Միխիթարեան միաբաններուն աշխատասիրութեամբը Արեւ Սրբոյն Պեպրոսի անուամբ հրատարակուած Վրբայկին միջոցովը առ ժամս բաւականաչափ խնամ տարուած ըլլալէն ետքը, ժամանակիս երկպառակութիւններուն ուրիշ քանի մը պատճառ կարծուած իրաց բուն որպիսութեանը վրայ համառօտիւ ու հանդարտ հոգւով խօսելու կը չափաւորենք առ ժամս մեր խաղաղասէր նպատակը :

Արդ որոնք են ատ իրողութիւնքը, և որն է ատոնց բուն որպիսութիւնը՝ որ հիմակուան շիտթութեանց պատճառ կը կարծեն ոմանք :

Աս խնդիրներուս վրայ մինչև հիմա ոմանք ուզածնին՝ ուզածնուն պէս կերպ կերպ նկարագրելին, և հրատարակելին, աս վերջի ատեններս ալ = Ասիոյի ուղղափառ հայոց աստուայանքը = անուամբ թշնամանաց տետրակ մը հրատարակուեցաւ, որուն հեղինակն ալ՝ ոչ գիտեմք որպիսի հոգւով և նախանձով շարժեալ ինք զինքը պինդ առաջ նախանձաւոր ձևացուցած ՚ի պատիւ չրիստոսեւեան և ՚ի պատիւ ընդհանոր Վիերիին ըսելով չի խնայէր չարաչար խօսելու ուղղափառ Ակեղեցւոյ Ապիսիոսապետի ճշ և Օսայրագոյն վարդապետաց վրայ, և ատոնց համբերութիւնը չարաչար գործածելով, և ընթիւննին պատեհ առ իթ մըրած, ու այժմեան ստորական եղած տպագրութեան զէնքին ձեռք գրած ատոնց վրայ ժամանակէ մը ՚ի վեր ոմանց հրատարակած կերպ կերպ զբարտութիւնները հաւաքելով ու դիզելով չգիտցողներուն ու միամիտներուն աչքը ներկելու համար զանազան հնարադիւտ խօսքերով և ձևերով ուզածը կը գրէ : Աւ որովհետև ատ տետրակին մէջ որպիսի և իշէ

ոճով և եղանակաւ ամբողջաձ կը տեսնենք ժամանակիս շիտթութիւններուն պատճառ ըստւած խնդիրները, անոր համար աս տետրակէն կը քաղենք զանոնք, ու ատոնց բուն իսկ որպիսութիւնը կը բացատրենք՝ որպէս զի յայտնի տեսնուի աս զրպարտութեանց որչափ անհիմն, ուստի և նոյն իսկ շիտթութեանց որչափ անտեղի ըլլալը : Այն զի ամեն տեղ չէ թէ միայն իբր իրաւունք, այլ մանաւանդ իբր պարտաւորութիւն մը ճանչցուեր է աղբ առնելու և զգուշացնելու հասարակութիւնը այնպիսի լուրերու և յայտարարութիւններու վրայօք՝ որոնք կրնան այլայլել իրաց ճշգրտութիւնը և որպիսութիւնը : Այլ այդ պարտաւորութիւնը մասնաւոր կերպովմը նաև կարելոր կ'ըլլայ՝ երբոր աս լուրերը հաջակողները ամէն կերպ ճշգրտութեան և բանաւորութեան պարագայներով զանոնք զարդարելով կը ձևացունեն. և ան անձինքը՝ որ իրենց մասնակից չեն ըլլար՝ իբր հակառակութեան և ատելութեան հոգւով շարժեալ պարսաւելէն զտո՝ ուրիշներուն կարծիքնալ դիւրաւ շահելու համար՝ հաշակաւոր գիտութեան և ստուգութեան համարձակութեամբ մը կը հրատարակեն ան լուրերը :

Աւրեմն յիշեալ տետրակին հեղինակը ժողովրդին շիտթութեանցը պատճառներուն վրայ խօսիլ ուզելով Հասուն Արագայծառին Արիստոյոս, Ալախագահ, և Ալքապետ ընտրուելուն, և Վաւառակից Արիստոյոսներուն վրայ, և ուրիշ այլ և այլ ամբաստանութիւններու վրայ ուզածին պէս կը խօսի : Ի՞նչն իսկ իրաց որպիսութիւնը աղէկ մը բացատրելու համար աս խնդիրները մէյմէկ յօդուածի բաժնելով քանի մը խորհրդածութիւն ընենք :



## ՅՕԴՈՒԷԾ ԼՌԵՁԻՆ՝

Հասուն Գերապայծառին Եպիսկոպոս, Նախագահ, և Եղգապետ  
ընտրուելուն վրայ :

Յիշեալ տեսրակին հեզմտակը կ'ըսէ որ Հասուն Գերապայծառը Սարուշ Նախագահին ու ազգի Եկեղեցական և աշխարհական խնի մը երե-եկներուն . . . հասանալեամբը Նախագահի օգնիչ ըլլալու պարտաւորութիւնը երկարով Եպիսկոպոս յետաւորեցաւ . սակայն այսչափով առանց գոհ ըլլալու, չէմ գիտեր ի՞նչ միջոցներով, ի՞նչ իրասանքով և ի՞նչ օրէնքով ազգէն գաղանի Նախագահին յաջորդելու ինքնակ' մ'ալ առաւ և այնպէս վերադարձաւ, որ իր հովը ծածո-ի պահեց զայն մինչև այն օրը որ . . . յանկարծամահ եղաւ Սարուշ Նախագահը : Եւ իր քմայք յարմար շարունակելով պատմու թիւնը այնպէս կը ձևացնէ որպէս թէ Հասուն Գերապայծառը Եղգին կանոններուն դէմ ինք զինքը Սուրբ Եթովին ընտրել տուած, և այսպէս օրինազանցութեան չար օրինակ մը տուած ըլլայ և այլն :

Եյսպիսի մեծաբանութեամբ նկարագրուած պատմութեան վրայօք պիտի առաջ այս խորհրդածութիւնը կրնենք, թէ հաւանական բան չէ որ Հասուն Գերապայծառը, կամ ուրիշ սր և իցէ անձ մը ինք զինքը Սուրբ Եթովին ընտրել տալու համարձակութիւն ունեցած ըլլայ, վասն զի ինչպէս ամենուն յայտնի է Սուրբ Եթովին այսպիսի գործադրութիւններու մեջ եւելօք զգուշութեամբ, և արթնութեամբ կը վարուի, և ո՛չ երբեք կ'ընդունի՝ նա մանաւանդ բոլորովին կը մերժէ Եպիսկոպոսութենէ պայտի անարժան հնարքներով Եպիսկոպոսութեան յանկացող անձինքները : Ետոր հակառակը ըսեր եմք, թէ Հասուն Գերապայծառը Եպիսկոպոսութիւնը ընդունելու համար Սուրբ Եթովին ստի-

տուեր է : Սակայն ենթագրե՛նք որ այսպէս ալ եղած չըլայ,  
կը հետեւի՞ որ օրինազանց ընտրութիւն մը եղած ըլլայ : Ե-  
թէ Հասուն Գերապայծառը օտար, կամ երկրորդական  
իշխանութենէ մը ընտրուած ըլլար, ըտրութիւնը անկանոն,  
օրինազանց, և ատով օրինազանցութեան չար օրինակ մը  
տրուէր է ըսելու գուցէ իրաւունք ունենար ամբաստանողը :  
Իսկ կը դարմանանք ատ անխորհուրդ ամբաստանողին հա-  
մարձակութեանը, որով Հսովմայ Գերագոյն Գահին բրածն  
ու դրածը անկանոն՝ օրինազանց՝ և օրինազանցութեան չար  
օրինակ կը հրատարակէ : Վասն զի եթէ Հասուն Գերապայ-  
ծառին ընտրութիւնը անկանոն և օրինազանց եղած ըլլար՝  
անկանոնութեան և օրինազանցութեան յանցանքը ընտրու-  
ղէն աւելի՞ ընտրողին եղած կ'ըլլար : Այլ քան լիցի, և ոչ  
ընտրողը երբէք անկանոն և օրինազանց կ'ընայ ըսուիլ, վասն  
զի թէպէտ և Ագբ իր Եպիսկոպոսը ընտրելու իրաւունքին  
գործադրութիւնը ունենար, և իր կանոնները այսպէս սու-  
հանջէին, այսու ամենայնիւ Սուրբ Աթոռին իբր Սայր և  
Գլուխ Եկաղեցւոյ և աղբիւր իրաւաբանութեան՝ բոլոր  
աշխարհին որ և իցէ ուղղափառ ժողովրդի մը վրայ ըստ ին-  
քեան ունեցած ընտրութեան իշխանութիւնը պատշաճ տե-  
սած ժամանակը անմիջապէս գործադրելու ոչ երբէք խաբա-  
նուած և կապուած կ'ըլլար : Այս այնչափ ստոյգ վարդա-  
պետութիւն մըն է որ Սուրբ Աթոռը քրիստոնէ թագա-  
ւորներուն տուած Եպիսկոպոսաց ընտրութեան իրաւունքին  
նաև երբեմն չի նայելով ըստ պահանջման պարագայից ինքը  
անմիջապէս կ'ընտրէ :

Իսկ իստակցութիւննիս չի տարածելու, և բուն իրաց  
որպիսութիւնը բացատրելու համար ատ ընտրութեան իրա-  
ւունքին բուն սկզբունքները քննենք, և նայինք ստոյգ է  
Ագբին ենթագրուած ատ ընտրութեան իրաւունքը, որուն  
համար օրինազանցութեան չար օրինակ տրուած կըսուի կոր  
Հասուն Գերապայծառին Եպիսկոպոս ընտրուիլը : Ա՞յ գլխա-

ւոր խնդրոյս որպիսութիւնը աղէկ մը բացատրելու համար  
կը հարկադրինք նախ և առաջ Ապիսկոպոսութեան բուն  
ընտրութեան իրաւունքին վրայ Ակեղեցւոյ վարդապետու-  
թիւնը համառօտիւ պատմելու . և ապա առ դանդատին  
դէմարդէն հրատարակուած հատուած է մը երևելի պարա-  
գայները քաղելով առ նիւթիս վրայ եղած գործադրութիւ-  
նը մէջ բերենք, որպէս զի նոյն իսկ ընտրութեան սկզբունք-  
ներէն, և մինչև հիմա եղած գործադրութիւններէն հաս-  
կրցուի առ օրինազանցութեան ամբաստանութեանը որչափ  
անհիմն և անտեղի ըլլալը :

Պինդ առաջ գիտնալու է որ Ակեղեցւոյ մանուսնդ հին  
ատենները գրեթէ իւրաքանչիւր քրիստոնէ ազգը, կամ լաւ  
ևս եկեղեցական դաւառները Ապիսկոպոսաց ընտրութեանը  
վրայօք կանոններով սահմանուած կերպ կերպ կարգադրու-  
թիւններ, և սովորութիւններ ունէին, որոնք ատեն ատեն  
ժամանակին պարագաներուն ստիպմամբ կը փոխուէին եր-  
բոր առ Ապիսկոպոսական աթոռներուն որպիսութեանը  
վրայ, կամ ան Վաւառներուն և Ազգերուն հանդամանացը  
վրայօք հախան և երևելի փոփոխութիւններ վրայ կուգային  
և այսպէս նոյն իսկ ընտրութեան եղանակներն ալ կերպ  
կերպ փոփոխութեան սակ կ'իյնային : Մանաւանդ երբոր  
Ազգիմը, կամ Վաւառի մը Ապիսկոպոսական Աթոռները  
կը վերնաին, կը ջնջուէին, ան ատեն ընտրութեան եղա-  
նակն ալ կը վերնար, կը ջնջուէր : Մանապէս երբոր նորէն  
նոյն աթոռները կը հաստատուէին, կամ ուրիշ նոր աթոռ-  
ներ, կամ քահանայապետական դասակարգութիւն մը կը  
գրուէր նէ՛ առ աթոռներուն Ապիսկոպոսաց ընտրութիւնն  
ալ կամ նոյնը, կամ այլ և այլ փոփոխութիւններով կը հաս-  
տատուէր, կամ բողբոջին նորէն կը կարգադրուէր : Այս գոր-  
ծադրութիւններու վրայօք գլխաւոր դիտելու բանն ան է  
որ, որով իշխանութեամբ ան աթոռները կը հաստատուէին  
նէ, նոյն իշխանութեան զօրութեամբն ալ ատոնց Ապիսկո-



պոսներուն ընտրութեան եղանակը կը կարգադրուէր և կը հաստատուէր, այնպէս որ եթէ Լ;պիսկոպոսական աթոռներուն կանգնումը և կարգադրութիւնը Լ;գգային կամ Վաւառային Վահանայսպետական Վասակարգութեան իշխանութեամբը կ'ըլլար նէ՝ նոյն իշխանութեան զօրութեամբն ալ Լ;պիսկոպոսական ընտրութեան եղանակը կը կարգադրուէր: Բայց ուր որ Լ;գգային, կամ Վաւառային Վահանայսպետական Վասակարգութիւնը վերցած և ջնջուած ըլլալով, կամ ուրիշ ո՞ր և իցէ պատճառաւ առ աթոռները անմիջապէս Լ;ռաքելական Վահին իշխանութեամբը կը կանգնուէին նէ՝ նորին իշխանութեանը նաև կը վերաբերէր ատոնց Լ;պիսկոպոսներուն ընտրութիւնը, ուստի և ատոնց ընտրութեան եղանակին որոշումն ալ, ըստ եկեղեցական կանոնաց և սահմանադրութեանց: Լ;հա Լ;պիսկոպոսաց բուն ընտրութեան իրաւունքին վրայ Լ;կեղեցւոյ ճիշդ վարդապետութիւնը:

Ուրեմն եթէ յիշեալ տետրակին հեղինակը եկեղեցւոյ աս ընդհանուր կարգադրութեանցը և սահմանադրութեանցը սկզբունքներուն քիչմը դիտելու ըլլար՝ Հասուն Վերապայծառին անմիջապէս Լ;ռաքելական Վահին ընտրուած ըլլալուն վրայօք գանգատի առիթ չէր գտնար: Որովհետև, ինչպէս ետքը կը պատմենք, ամենուն ծանօթ է որ Կ=Պօլոյ ուղղախառ ժողովրդեան Լ;գգային Լ;պիսկոպոս և Լ;պիսկոպոսական Լ;թոռ դրուելը հինուցմէ չէ, այլ վերջի ժամանակներնուս գործքն է, ան ալ Լ;ռաքելական Վահին իշխանութեամբը եղած և կարգադրուած է, ու ընտրութեան համար ալ դեռ սրտօնութիւն մը կամ շնորհք մը չէ ըրած: Ուստի Լ;պիսկոպոսաց ընտրութեան վրայօք աս ժողովուրդը ան հին ըսուած սովորութիւնը եթէ աս քաղաքիս մէջ ատենօք գործադրած ալ ըլլար, իր սեպհական ազգային Լ;պիսկոպոսներ և Լ;թոռներ ալ չունենալով հոս՝ ան ընտրութեան, ան սովորութեան եղանակն ալ դադրած և անհետ

եղած կ'ըլլար, և ըստ վերջիչեալ եկեղեցական սահմանադրութիւններուն համաձայն առ իրաւունքը՝ առ Ապիսկոպոսներուն ընտրութիւնը՝ և առնոց ընտրութեան եղանակին կարգադրութիւնն ալ նորին Առաքելական Վահին ընդհանուր հոգացողութեանը կը վերաբերէր. ինչպէս իրօք այնչն Առաքելական Վահը գործադրեր է, ինչպէս պիտի պատմենք՝ և առ ընտրութեան եղանակն ալ սահմանելու խոստացեր է:

Ուրեմն նոյն իսկ ընտրութեան սկզբունքներէն յայտնի է Հասուն Վերապայծառին ընտրութեանը վրայօք յիշեալ տեսրակին օրինազանցութեան ամբաստանութիւնը որչափ անհիմն և անտեղի ըլլալը:

Վանք հիմա քննենք առ Ապիսկոպոսաց ընտրութեանը վրայօք եղած գործադրութիւնը:

Մինչև անցեալ դարուն կէսըը կ'Պօլսոյ ուղղափառ ժողովուրդը զինքը կառավարելու ազգային Ապիսկոպոս մը չունէր, այլ բոլորովն կ'Պօլսոյ Ատօին Առաքելական Փոխանորդին անմիջական կառավարութեանը ներքէն էր: Այս միջոցներս Տէնէդիկոտոս ժիջ Սրբազան Վահանայապետը իր ներկայութեամբ բրած Արդիւնալաց մասնաւոր ժողովքի մը մէջ հաստատեց որ սոյն իսկ ժողովուրդը ազգային Ապիսկոպոս մը ունենայ, բայց ան պայմաններով որ նոյն իսկ Սրբազան Հօրը Առաքելական վճռոյն սա հետեւեալ խօսքերը կը յայտնեն. «Ուղղափառ Հայոց կը շնորհուի, կըրտէ, որ ազգային Առաքելարիչ մը ունենան՝ որն որ պէտք է Առաքելական փոխանորդէն ընտրուի, և ամենեւեկն իրաւաբանութիւնն մը չի գործարքէ, այլ անոր պաշտօնը ըլլայ միայն ուղղափառ Հայ ազգին կարօտութիւնները Առաքելական փոխանորդին իմաց ասլ՝ որպէս զի ան ալ զանոնք հոգայ:»

Այս վճռոյս գործադրութիւնը եղաւ 1758 ին՝ և Սերապեան Աթանաս Վերապայծառը Վրչապին փոխանորդ ընտրուեցաւ կ'Պօլսոյ Առաքելական փոխանորդ Ատօին Ապիս-

կոպուէն, և թովկրայի տիրոջսով Եպիսկոպոս եղաւ, և նոյն Առաքելական Լատին փոխանորդին հպատակութեամբ՝ ժողովուրդը կը կառավարէր :

Այս յաջորդեց 1779 ին Արարդեան Անտոն վարդապետը անմիջապէս Սուրբ Աթոռէն ընտրուելով. որով աս երկրորդ ազգային փոխանորդին ընտրութեանը մէջ և ո՛չ Առաքելական փոխանորդ Լատին Եպիսկոպոսը մասն ունեցաւ, այլ միայն Սուրբ Աթոռին գործքը եղաւ անոր բոլոր ընտրութիւնը :

Արարդեանը քանի մը տարուընէ ետեւ, այսինքն 1784 ին պաշտօնէն հրաժարելով անոր տեղը դրուեցաւ Սօֆեայեան Սահակ վարդապետը նմանապէս Սուրբ Աթոռին անմիջական ընտրութեամբ :

Սոյն Սօֆեայեան Գերապայծառը՝ Աբերեան Ստեփան վարդապետը իրեն օգնիչ ընտրելով՝ աղաչեց Սուրբ Աթոռին որ զանկա հաստատէ, ինչպէս ան ալ իրօք հաստատեց 1794 ին՝ շնորհելով անոր նաև Սօֆեայեան Գերապայծառին յաջորդելու իրաւունքը :

Աբերեան Գերապայծառը պաշտօնէն ելաւ 1806 ին և Առաքելական Լատին փոխանորդին աղաչանաջը թարմար՝ Սուրբ Աթոռը երկրորդ անգամ ազգային փոխանորդ ընտրեց վերոյիշեալ Արարդեանը՝ Եպիսկոպոսութիւն նաև տալով անոր : Արիկայ արտորուած մեռաւ ՚ի Օմիւնիա 1824 ին :

Այի մեռնելէն ետեւ Կօլոսայ Առաքելական փոխանորդը Սուրբ Աթոռին հրամանաւը չորս հոգի առաջարկեց Հռուովմայու, որոնց մէջէն ժբ Լեոն Սրբազան Քահանայապետը ընտրեց Մարուշեան Պօղոս վարդապետը 1825 Օգոստոսի 21 ին : Բայց ժամանակին ցաւալի պարագաներուն պատճառաւը ասիկայ ան ատեն Եպիսկոպոս չի ձեռնադրուեցաւ՝ ուստի նոյն Սրբազան Քահանայապետը ինչնալարժ կա՛ծօք անոր տեղը ընտրեց Բաբաղեան Գէորգ Գերապայծառը :

և Տխտպօլոյ տխտլոսով Եպիսկոպոս ըրաւ զանի: Ատոր ժա-  
մանակը՝ այսինքն 1830 ին ազգային ազատութիւնը տեղի  
ունեցաւ, և այն ժամանակը՝ ինչպէս ամենուն յայտնի է՝  
Առաքելական Գահը քաղբիս Նախագահական Աթոռը  
հանգնեց:

Սա պարզ պատմութիւննիս բաւական կրցուցնէ թէ ազ-  
գին մինչև բաժանման ժամանակը աս ժողովուրդը իր ազ-  
գային Եպիսկոպոսները ընտրելու ամենեւին իրաւունք մը չէ  
ունեցեր, անոր ընտրութիւնը ՚ի սկզբան ժղ Բենեդիկտոս  
Արքազան Քահանայապետը՝ ինչպէս վերոյիշեալ վճռոյն  
= Առաքելական փոխանորդէն ընտրուի = խօսքերը կը ցուցնեն՝  
սեփականներ էր Կոստանդնուպօլոյ առաքելական փոխա-  
նորդ Ատին Եպիսկոպոսին, որ է ըսել Հռովմայ Արքազան  
Քահանայապետին Երեսփոխանին:

Կարելի է որ Առաքելական լատին փոխանորդը երբեմն  
ազգային փոխանորդը ընտրելու ատեն՝ անձինքներու վրայօք  
հաւատացելոց բերմանը դիտած ըլլայ, ինտոր՝ յիշեալ տետ-  
րակին հեղինակին ըսածին պէս՝ Սարուշ Գերապայծառն ալ  
ըրեր է ազգիս եկեղեցական և աշխարհական չանի մը երեւիչ  
ներուն հասանութեամբը Հատուն Գերապայծառին Եպիս-  
կոպոսութեանը համար. բայց Առաքելական փոխանոր-  
դին՝ պարագաներուն պահանջմանը յարմար երբեմն  
գործածած ատ զգուշաւոր վարմունքը ժողովրդեան ենթա-  
դրուած ընտրութեան իրաւունքին ապացոյց մը չի կրնար ըլ-  
լալ: Եւ այս բանիս ստուգութիւնը կը հաստատէ նոյն իսկ  
Առաքելական փոխանորդներուն ընթացքը՝ որոնք քանի քա-  
նի անգամ և ոչ իրենք կը խառնուէին ազգային Եպիսկոպո-  
սաց ընտրութեանը՝ երբոր Սուրբ Աթոռը ըստ պարագայից  
ինչնաչարթ կամօքը բանը անմիջապէս ուղղակի ինքիւրէն կը  
հոգար:

Կը մնայ հիմայ քննելու թէ արդեօք ժողովուրդը գոնէ  
իր ազգային ազատութենէն ետև աս իրաւունքը ստացած է:

մի՛ երբոր Առաքելական Գահը 1830 ինքազբիս՝ Նախագահական աթոռը կանգնեց :

Այս ժամանակէս 23 տարի է և Կոստանդնուպօլսոյ Ուղղափառ Հայոց Եպիսկոպոսական Աթոռին վրայ երեք Նախագահ Աքքեպիսկոպոսը նստան, այսինքն՝ Կուրիճան Գերապայծառը, Մարուշեան Գերապայծառը և Հատուն Գերապայծառը, Քննենք ատնց ընտրութեան պարագաները որպէս զի ինդրոյն լուծմունքը իրօք ալ կարող ըլլանք տարու :

Երբոր բարձրագոյն Գուռը աղբը դատեց, և Սուրբ Աթոռն ալ Կոստանդնուպօլսոյ Աքքեպիսկոպոսական և Նախագահական Աթոռը կանգնելով կը մտածէր նոր Աթոռին գրուելու Եպիսկոպոսին ընտրութեան եղանակը՝ հոս ժողովուրդը վեց եկեղեցականով և շատ աւելի աշխարհականներով ժողովք մը գումարած՝ իրենց բաղձանքը յայտնեցին Սուրբ Աթոռին որ ընտրուելու Եպիսկոպոսը ան չորս գլխաւոր Եկեղեցականաց մէկը ըլլայ զորոնք նոյն ատեն կ'առաջարկէին Սուրբ Աթոռին : Սուրբ Աթոռը աս գործքը անկանոն սեպելով ինդիրքնին մերժեց : Եւ թէև ընտրութիւնը վերջապէս Կուրիճան Գերապայծառին վրայ ինկաւ՝ ատոր պատճառը՝ չէ թէ անոր ժողովրդեան աղերսագրին մէջ նշանակած չորս եկեղեցականաց մէկը ըլլայն էր, այլ բանը ասանկ վերջապէս զանազան նկատմանց համար՝ զորոնք շատերը կը ճանչնան, և ան գործքին մասնակից եղող դեռ կենդանի անձինք կրնան վկայել :

Եւ աս ըսածնիս աւելի ևս կը հաստատի նոյն իսկ Կուրիճան Գերապայծառին Եպիսկոպոսութեան Առաքելական կոնդակէն, ուր ոչ միայն ամենեկին խօսք չի կայ Ազգին ոչ ընտրութեան՝ ոչ առաջարկութեան և ոչ աղաչանացը, այլ մանաւանդ ընդ հախտակն նոյն Առաքելական Կոնդակը բացարձակ կը յայտնէ թէ Սրբազան Քահանայապետը ինքը ընտրեց և անուանեց Կուրիճան Գերապայծառը՝ ըսելով

— Առաջելան իշխանութեամբ ընտրեմք և անուանեմք = : Սան զի) աս խօսքերը եկեղեցական բաներու մէջ կը գործածուին մինակ երբոր ան եկեղեցիներուն խօսքը կ'ըլլայ՝ որոնց հոմիւններուն ընտրութիւնը անմիջապէս կ'ախեսալ է Սուրբ Աթոռին ազատ կամբէն, և գործադրութենէն :

Սուրբմն Նուրիճան Գերապայծառին Լպխիկոպոս եղած ժամանակը դեռ ատ ազգային ընտրութեան իրաւունքը՝ զոր յիշեալ տետրակին հեղինակը կ'ենթադրէ՝ Սուրբ Աթոռն ուէն չէր ճանչցուած, և շնորհուած :

Սարուշ Գերապայծառին ալ ընտրութիւնը ինչպէս եղած ըլլալը յայտնի է ամենուն : Նուրիճան Գերապայծառը իր վերջի ժամանակները աղաչեր էր Սուրբ Աթոռին որ Սարուշ Գերապայծառը իրեն օգնիչ տրուի, և Սուրբ Աթոռն ալ ընդունէր էր անոր աղաչանքը : Բայց Սարուշ Գերապայծառը հոս չի հասած՝ Նուրիճան Գերապայծառը մեռնելով՝ Կոստանդնուպօլսոյ ուղղափառ հայոց եկեղեցականները աղերսագիր մը խրկեցին Հռովմ, ինչպէս ըրին նաև աշխարհականները, երկուքնին ալ իրենց աղերսագրաց մէջ կ'աղաչէին՝ որ նոյն աղաչանքը զոր հանդուցեալ Նուրիճան Գերապայծառը ըրեր էր արդէն Սուրբ Աթոռին Սարուշ Գերապայծառին համար՝ ընդունուելով՝ նոյնը ընտրուի Նախագահ Կոստանդնուպօլսոյ : Սուրբ Աթոռը տեսնելով որ ատ ինդիրքը իր որոշմանը յարմար էր՝ առանց քննելու ազգին ըրածը և առանց յիշելու խիզանիկա՝ անոր ընտրութիւնը իրեն սեպհականած ըլլալը կոնդակին մէջի

— ընտրեմք, կարգեմք և անուանեմք = խօսքերովը կը հասկըցնէ :

Եւ առաւել ևս բացատրելու համար թէ Սուրբ Աթոռը իրեն բաղձանացը յարմար ըրած՝ այսպիսի ընտրութեամբը ազգին ամենեկին իրաւունք մը չէ տուած՝ Սուրբ Ժողովքը 1838 Մայիսի 8 ին Գ. Լսայեան Հ. Կարապետ Ազգապետ մարդապետին կը գրէր թէ Սարուշ Գերապայծառը Սրբազան

Հօրմէն ընտրեցաւ, և թէ ասկից ետև ըլլալու ընտրու-  
թեանց անանկ կանոն մը պիտոր սահմանո-ի որ՝ Ապիսկոպոսաց  
ընտրութեան վրայօր եղած եկեղեցական կարգադրութեանց և առ-  
տեալի անոնց իրաւանցը յարմար ըլլայ, Վասնորոյ Սրբազան Հայրը  
իրեն կը վերապահէ աս բանիս վրայ պատշաճ սահմանադրութիւնները  
պատու, որն որ անշոշուօ հաճելէ կ'ըլլայ, կ'ըսէ, յետ ամենոր  
որ Առաքելական Արքեպիսկոպոսաց Կարգադրութեանը միշտ կը-  
շոշուօնէ :

Ուստի յայտնի է որ Սուրբ Աթոռը բաւական ինտիմ-  
ցեր է թէ Սարուշ Վերապայծառին ընտրութեան ատենը  
դեռ ազգին չէր վերաբերեր այսպիսի իրաւունք մը :

Գանք հիմակ Հասուն Վերապայծառին ընտրութեանը :  
Սարուշ Վերապայծառը տարիքը առած ըլլալով, և քանի  
քանի անգամ պաշտօնէն հրաժարիլ ուզելով՝ Սուրբ Աթո-  
ռէն ատ հրամանը չէր կրցած առնել, ուստի վերջապէս նոյն  
Սուրբ Աթոռէն ինզրեց որ Հասուն Անտոն վարդապետը՝  
զորն որ ան ատենները՝ ինչպէս մեր հեղինակն ալ կը զրուցէ  
= ազգիս Արքեպիսկոպոս և աշխարհական քանի մը երե-եկներուն հաս-  
նութեամբը = հռովմէր իրկած (աս թեմիս քանի մը գործը-  
րուն համար) իրեն օգնիչ Ապիսկոպոս անուանի : Գրիգոր ԺԷ  
Սրբազան Վահանայապետը 1842 ին զիջաւ ու կատարեց  
Սարուշ Վերապայծառին բաղձանքը, և ինքնաշարժ կամօքը  
անոր աւելցուց նաև յաջորդելու իրաւունքը : Երբոր Հա-  
սուն Վերապայծառը Ապիսկոպոս ձեռնադրած Պօլիս վերա-  
դարձաւ՝ չէ թէ յիշեալ տետրակին՝ գտնէ տգիտաբար՝ ըսա-  
ծին պէս իրեն Ապիսկոպոսի օգնիչ և յաջորդ ըլլալուն Ա-  
ռաքելական Անդակը քովը ծածուկ պահեց, այլ 1842 հոկ-  
տեմբեր 5 ին Սարուշ Վերապայծառին եւ Ազգապետ  
Պատրիարք վարդապետին ներկայութեամբը գումար-  
ուած Արքեպիսկոպոսաց ընդհանուր Ժողովոյն մէջ նոյն  
կանոնակը բացարձակապէս կարդացուելով՝ անկէց լուրը  
շուտով Ժողովողին մէջն ալ հրատարակեցաւ, և բոլոր

Հասարակութիւնը զինքը չափազանց սիրելուն համար ոչ միայն անոր ասպագայ յաջորդութեանը չի հակառակեցաւ, այլ մանաւանդ ատիկա անոր բաւական ալ չի համարելով՝ նոյն հասարակութիւնը բանի մը տարի ետքը՝ այսինքն 1845 ին եկեղեցականներէն ու աշխարհականներէն բաղկացած ընդհանուր ժողովք մը գումարուելով՝ Հասուն Գերապոյծաւոր Ազգապետ կամ քաղաքական Պատրիարք ընտրել ուզեց՝ և որչափ որ ինքը ընդդիմացաւ ալ նէ՝ այսու ամենայնիւ ազգին միաբան որոշմանը դէմ կենալով զանի չի վշտացնելու համար վերջապէս հարկադրեցաւ յանձն առնելու զայն պաշտօնը : Ահա այս է ան Հասուն Գերապոյծաւոր որ հիմա Ապիսկոպոսութեան և յաջորդութեան և նոյն իսկ քաղաքական պատրիարքութեան յաիշտակօղ կը բամբասուի :

1846 Յունիս 22 ին Մարուշ Գերապոյծաւոր աշխրբէս փոխուելով նոյն ատեն Հասուն Գերապոյծաւոր անշուշտ վերոյիշեալ Առաքելական կոնդակին զօրութեամբ որ յաջորդութեան իրաւունքը բացարձակ կուտար իրեն՝ յաջորդեց հանգուցեալ Մարուշ Գերապոյծաւորին, և ինչպէս եկեղեցական կանոնները կը պահանջէին՝ իսկ և իսկ սկսաւ Ասիապահական իշխանութիւնը գործադրելու :

Գումարեցաւ ան ատեն ( ) գոստոսի 6 ին Ազգային ժողով մը կեղեցականներէ և աշխարհականներէ բաղկացեալ, ուր որոշուեցաւ և արգիւտեցաւ Սրբազան Հօրը ամեն կարգէ քահանայից երեւելիներէն 27 ստորագրութեամբ և աւելի ևս ժողովրդեան անուականներէն և գլխաւորներէն ընդ ամենը հարիւրէն աւելի ստորագրուած ազերսագիր մը, որուն մէջ գոհ ըլլալով Հասուն Գերապոյծաւորին ըտրուութեանը համար կ'ըսէին որ = կարգեալ լիութիւնով իշխանութեամբ այբր Սուրբ Աւետիսյ յԱրեւիկոպոս և ԴՆախագահ այբ ինքի Ազգային, ինչ խնարհ աղերսարկոս ոչ կարեմ ի յայտ ամբել ըստ բաւան կանին զորսխոթիւն և զմիւրսխոթիւն «գոյ մերոյ ընդ այբ, որպէս և ոչ կարեմ ի յայտ ամբել զսեպհական զգացմունս երսխոս :



Գիտութեան և շնորհակալութեան առ նոյն Աթոռ Սուրբ = Իբր զի լինելով նա ինչն Պիեր . Հասուն զարդարեալ ըստ պիպոյից ամենայն կարևոր որպիսոնութեան առ արժանապէս ունեւոյ զայդպիսի վեճ մեծակ, Եւ այնպիսի ծանոցեալ առ հասարակ, այնպէս հաճոյ եղև բովանդակ ազգիս այս Գործ Հայրենի խնամոյ այդր Սուրբ Աթոռոյ և այլն = Եւ յայտնելն ետե որ Հասուն Վերապայծառն անձին վրայ ան երկու սրաշածնին, այսինքն Ախտագահութեան և քաղաքական Պատրիարքութեան միաւորած ըլլող ուրիշ անգամի կանոն մը չի համարուի, կ'ըսեն = Եւ ան զի այս մասորութիւն երկոց իշխանութեանց ՚ի մի անչն շեղուի ՚ի Գործ, ելիկ ոչ առ մեծի յոյժ վարակութեան, զոր Ազգն կալու մշտ ՚ի Վերայ . Հասունն վտան իւրոյ սակասագիտութեան պաղանքից առ ՚ի կարող լինելոյ ՚ի փառասոր Գործարարութիւն երկայանչեալ իշխանութեանց . և այլն = Եւ շնորհակալութիւննին ընելն ետքը նոյն ստորագրեալք աղերսագրին մէջ կ'աղաչէին Սրբազան Քահանայապետին որ առկից ետե ազգային Եպիսկոպոսաց ըտրութեանը մէջ ազգին ալ մասնակցութիւնը չի մերժէ = Եւ աղերսագրիս պատասխանը Սուրբ Աթոռը 1847 . Սարտի 3 ին տուաւ հանգուցեալ Ատարձեան Վերապայծառն որն որ ան ստեն Ախտագահական Աթոռակալ և աղերսագիրը ստորագրողներուն առաջինն էր, և առ պատասխանագրին մէջ Ազգին ընտրութեան վերաբերեալ ըրած խնդրոյն վրայ կը գրէ = Այսպիսի բաներո մէջ Այնդեոյ Գործարարած սիլեռանքները և կանոնները պահուելու են . ուստի Սուրբ Աթոռը զանց չընէր առ Գործիք զԲաղելու անոր պէպի եղած խնայան ծանրութեամբ =

Ահա ուրիշ աստացոյց մակ, թէ որ կարծութիւն կար նէ, որն որ յայտնի կըցուցնէ թէ մինչև առ ժամանակը ազգին ընտրութեան իրաւունքը դեռ չէր ճանչուած և շնորհուած Սուրբ Աթոռէն :

Արդ՝ բոլոր ըսածնիս բովանդակելով՝ յայտնի կը տեսնուի թէ առ ժողովուրդը իր ազատութենէն առաջ ՎՊՊ =

սոյ Առաքելական փոխանորդ Լատին Լայիսկոպոսին Հայաստակութեան ներքե եղած տաճն իր Լայիսկոպոսաց ընտրութեան իրաւունքը չ'ունէր . և անկից ետև ալ Սուրբ Աթոռը ատ իրաւունքը դեռ չէր շնորհած :

Յայտնի կը տեսնուի որ Հատուն Գերապայծառին Նախագահ ըլլալուն վրայօք Քահանայք և աշխարհականք՝ ազգը միաբան դո՛հ էր , և այնպէս որ իբր թէ Ազգը զանի ընտրած ըլլար՝ ինչպէս կ'ըսեն յիշեալ աղերսագրին մէջ անոր ընտրութեանը վրայ իրենց ատ վաւերական գրովը գոհութիւննին Առաքելական Աթոռին խնայունելով :

Յայտնի կը տեսնուի որ Հատուն Գերապայծառը Լայիսկոպոս ձեռնադրուելէն ետև իւր բերմանը դեմ Ազգը զանի խնդրելով Ազգապետ կամ քաղաքական Պատրիարք ընտրեր է :

Ուստի և յայտնի կ'երևայ Հատուն Գերապայծառին Լայիսկոպոս Ազգապետ , և Նախագահ ընտրուելուն վրայօք եղած գանդատներուն որչափ անհիմն և անտեղի ըլլալը : Ուստի և ատ գանդատներուն շատ յարմար է Ախիղայոս Արքազան Պապին ան պատասխանը , զոր տուաւ իններորդ դարուն այսպիսի դիպուածի մը մէջ Կաթողայ Իգնատիոս Պատրիարզին վրայօք Սիբայէլ Լայսեր ըրած գանդատներուն՝ գրելով հինգերորդ թղթին մէջ = Սեղէ և Տեր Բարեյշչապաի | Լոն Նախորդներնոս յեր գրած նամակները շեռ յեռոնիս են . ապոնց մէջը դո՛ւք Բարի վիայո-լի-ն իո-գոս Իգնատիոսին ատա-սինո-լի-աններո-ն վրայ և օրինա-որ կը սեպէք անոր ընտրո-լի-անը և Լայիսկոպոսո-լի-նը . հիմա ալ զանի Պատրիարքայան Աթոռին իբր յախճախիդ նիարագրել կ'ոչկէ :



## ՅՕԴՈՒՆԾԵՐԿԻՈՐԴ՝

Եպիսկոպոսաց ընտրութեանը վրայ :

Սուրբ Աթուին աս ընդարձակ եկեղեցական Վաւառիս մէջ նոր Աթուներ կանգնելը . կամ լաւ ևս աս Աթուներուն Հովիւներ ընտրելը՝ ոմանք մեր Ազգէն կամ ճշգիւ ևս ըսենք՝ ոմանք աս քաղքիս ժողովրդէն դժարնին գալու բան մը սեպեցին : Աս գանգաօր երկու կերպ կ'ըլլայ կոր . մերժը նոր Աթուներուն հաստատուելուն վրայ , մէյ մալ աս Աթուներուն Եպիսկոպոսացը ընտրութեան եղանակին վրայ :

## ԽՆԴԻՐ ԱՌԱՅՒՆ՝

Նոր Աթուներուն հաստատուելուն վրայ :

Ա մասիս մէջ նախապաշարեալ միտքերը լուսաւորելու համար պինդ առաջ ատ խորհրդածութիւնը ընելու կ'ըստիպուինք , թէ աս նոր Աթուներուն և ոչ մէկը Սայրաքաղաքիս ժողովրդեանը համար կանգնուած է . բայց ամէնքն ալ սահմանակից Վաւառներուն համար . ուստի չենք կրնար ամենեւին հասկընալ թէ ի՞նչ պատճառաւ ուրիշ գաւառաց ուղղափառներուն եղած շնորհքի մը համար Սայրաքաղաքիս ժողովուրդը կրնայ դժամնիլ , մանուսնոց որ ինքքը ՁՅ տարիէ ՚ի վեր Նախագահական Աթուին կանգնուելովը նոյն պարգևը վայլած է : Աս Նախագահական Աթուռիս կանգնումը ՁՅ տարի առաջ բովանդակ Ազգին Բարձրագոյն Վրան շնորհած ազգային ազատութեան համեմատ Սուրբ Աթուին կողմանէ երեւելի պարգև մը եղած է . բայց

աս սրտգեւս իրօք ու ուղղակի Մայրաքաղաքիս ժողովուրդը վայրած է քան թէ սահմանակից Վաւառներուն ուղղափառները, որոնք ալ բաւական իրաւունք ունէին եղանակաւ մը անանկ սրտգեւ մը վայելելու : Իրաւ է որ սոս Գաւառներն ալ Նախագահական Աթոռին խնամովը իր փոխանորդներուն ձեռօքը կը կառավարուէին : Բայց առանց կողմնակցութեան խօսելով՝ աս անուղղակի և ընդմիջական կառավարութիւն մըն էր : Եւ Նախագահական Աթոռին սոս գաւառներուն վրայօք աս ընդմիջական կառավարութեան պտուղներն ալ սրտնք էին . սրպիսի եղանակաւ ան Գաւառներուն եկեղեցական իրողութիւնները կը կատարուէին . ատոնց ատ կառավարութիւնը Նախագահական Աթոռին կանգնուելէն առաջ եղած կառավարութենէն ի՞նչ չափ տարբերութիւն ունէր : Իրաւ է , քաղաքական մասին կողմանէ՛ ան Գաւառներն ալ Մայրաքաղաքինման Սեփարտիստներու Արքունի՛ առատածեզնութեամբ բոլոր Օսմանեան Տէրութեան մէջ գտնուող կաթողիկոսներուն շնորհած կրօնական Ազատութեան ուժովը՝ ամէն արտօնութիւնները կրնային վայելել , և ըստ մասին կը վայելին , ու թէպէտև Ազգային ազատութենէ առաջ եղածէն աւելի աղէկի փոխուած էր ատոնց միշտապէս , բայց այս փոփոխումը աւելի Տէրութենէ շնորհուած ազատութեան արդիւնքն էին , որով բոլոր Օսմանեան Տէրութեան մէջ թէ հաւատացեալ ժողովուրդը ու թէ եկեղեցականը կրօնական ազատութիւնը իրօք և գործադրութեամբ վայելելու իրաւունք ստացած էին , ու աս ազատութեան ուժովն էր՝ որ ան Գաւառներն ալ իրենց արքունի հրովարտակով ճոխացեալ Առաջնորդները ունէին՝ իրենց Եկեղեցիները Քահանայները ու Գաղատուները , ու ան ամէն բան՝ որ Օսմանեան Տէրութեան հպատակ ուրիշ արեւելեան ազգաց նման՝ ատ կրօնական ազատութեան միջոցովը վայելելու ի-

բաւաւնը ունեցած էին : Աս հոգեւոր բարեբարութիւններն ալ Արեւելեցական իշխանութեան արդիւնքն ըլլալը անժըտեւելի է . ու աս իշխանութիւնը Նախագահական Աթոռին՝ իբր իր գլխաւոր աղբեր կը վերաբերէր . բայց այսու ամենայնիւ՝ Արօնական ազատութիւնը ըստ ինքեան հարկաւորապէս Նախագահական Աթոռին կանգմանը հետ կապուած չէր . իբր թէ աս Աթոռը չի կանգնուէր նէ , ան Վաւաւանքուն Աթոռիկները Արեւելեցական իշխանութեան ատարդիւնքները չէին կրնար վայելել . չէ , աս Արեւելեցական իշխանութեան ան Վաւաւանքուն մէջ դործադրութիւնը Նախագահական Աթոռին կանգմանը հետ հարկաւ չէին կապուած . որովհետեւ աս Աթոռը չի կանգնուած ըլլար ալ նէ , կրնային ան Վաւաւանքուն նոյն Արեւելեցական իշխանութեան արդիւնքները վայելել . կրնար այսինքն Սուրբ Աթոռը ան Վաւաւանքուն կառավարելու համար պէտք եղած իշխանութիւնները Նախագահներուն տեղը պարզ քահանայի մ'ալ յանձնել : Աս ալ մտածելու է որ Նախագահական Աթոռին կանգնուելովը ան Վաւաւանքուն ինչ աւելի ստացած կը սեպուին , որ հովուական հանդիսութեանց առաջիկայ գտնուեցան՝ երբ օրինաւոր Ապիսկոպոսնին տեսնելու արժանացան ու անոր անձնական ու ուղղակի խնամքը վայելեցին : Աս միտարութենէ ալ զանոնք զրկել որ յանցանքնին կը պահանջէր , մանաւանդ որ՝ թէպէտեւ իրաւանց կողմանէ Սայրաքաղաքիս Եղորդեանը բողոքովն հաւատար չէին նէ ալ , անոնցմէ շատ վար չէին , և հոգեւոր պիտոյից կողմանէ նոյն վիճակի մէջ էին . ու Սրբազան Քահանայապետն ալ նոյն սիրով ու գթով զանոնք կը սիրէր , և նոյն պէս կը բաղձար զանոնք ալ ըստ կարի առատաձեռն բարերարութեամբը մխիթարել : Ուրեմն պէտք է որ խոստովանինք՝ թէ սահմանակից Վաւաւանքուն ալ Ապիսկոպոսական Աթոռներն ու Ապիսկոպոսներն ունենալու Սարսաքաղաքիս

ժողովրդին նկատմամբ հաւասար կարօտութիւն ունէին, ու բաւական իրաւունք, ուստի ասանկ միսիթարութեան մը հասնելու իրաւամբ կը փախաբէին ու անձխնոք կ'ոպատէին :

Աս իրենց փախաբն ալ ատեն ատեն բանի մը առիթներու մէջ յայտնեցին Հաւանականաբար աս բաղձանքը իրենց սրտերնուն մէջ աւելի վառած պիտի ըլլայ դիտելով Թէնոյն բաղձանքը իրենց ուրիշ շատ Ազգայնոց սրտին մէջ ալ կը գտնուի, որով Մայրաքաղաքնուս Ազգային Անուականաց կողմանէ՝ երկու ուրիշ ազգային Այլիսկոպոս ալ ունենալու համար իրենցմէ 1836 ին ստորագրեալ աղերսագիր մը՝ ու 1842 ին ալ ուրիշ ատոր յարմար աղաչանք մ'ալ առաջարկուած էր, ու յետքը 1844 ին հրազարակական եղանակով մը ուրիշ սահմանակից Վաւառի մը Թէ Քահանայները ու Թէ Ժողովուրդը իրենց համար առանձին Այլիսկոպոս մը ունենալու համար՝ իրենցմէ ստորագրեալ Աղերսագիր մը տուած էին : Արբաղան Քահանայատետը աս Վաւառիս բաղձանացը տեղեակ ըլլալով՝ ու աս բանիս վրայօք Ասխազաններուն աղաչանացը նայելով՝ որ ասանկ ընդարձակ գաւառ մը առանց Վաւառական Այլիսկոպոսաց՝ մինակ Ասխազահական Աթոռին տեսչութեամբը ըստ պիտոյից և ըստ Եկեղեցական կանոնաց չէր կրնար կառավարուիլ՝ այսչափ կարօտութիւնը կանոնաց համապատշաճ եղանակաւ մը լեցընելու դիտմամբ՝ Անոյ կողմը եղող սահմանակից գաւառաց Այլիսկոպոսական Աթոռներ կանգնելու հաճեցաւ ու 1848 ին Վեհափառ Սուլթանին դեսպան իրկուած, ու նոյն առթի մէջ Առաքելական Քննչի պաշտօնովը զարդարուած Սիդեանց Արքեպիսկոպոս Գեր, Խնովկենտիոս Ֆէրրիէրիին ձեռօքն ալ՝ հոս ժողովքի մը հրաւիրուած Եկեղացականաց ու ետքը նոյնպէս ժողովքի մէջ Ազգային Անուականաց ալ աս իր բարեբարոյ մտորքը հմայուց : Աս ամէն բան Արբաղան

Քահանայապետը առաջուց ընելէն ետքը՝ հաճեցաւ վերջապէս սա ընդարձակ վիճակի մէջ ալ իր առատածեռն գթութեամբը Քահանայապետական Վաստկարգութիւնը հաստատել : Աս շորհաբաշխ կարգադրութեան ալ կը տեսնուէր որ Սրբազան Քահանայապետը ասով ան հաւատացելոց փափաքը լեցրնելէն ու կարօտութիւնը հոգալէն ՚ի գառնախապատրաստութիւն մ'ալ ըրած կ'ըլլար կոր, որպէս զի կարենար մասնաւորաբար Արևելեան Եկեղեցւոյ սահմանագրութեանցը համաձայն՝ ուրիշ Արևելեան Ազգաց մէջ գործածուածին համաչափ՝ ու աղբերնուս մասնաւոր սրբազայներուն յարմար Եպիսկոպոսաց ընտրութեան եղանակ մը սա գաւառիս ալ որոշել ու այսպէս սա հաւատացելոց կարօտութիւնը ըստ կարի հոգալ :

Ահա սա Աթոռներուն ու Եպիսկոպոսաց գրութեան բուն պատճառը : Անշուշտ Քահանայապետական Վաստկարգութեան սա Եկեղեցւոյ մէջն ալ հաստատութիւնը, ինչպիսի որ Սրբազան շոր սա ժողովուրդին վրայ ունեցած սիրոյն ու խնամքին գլխաւոր ասպացոյց մըն էր զած, այնչափ ալ աղբային Եկեղեցւոյն ասով սրբան ազնուանալը ու ուրիշ Եկեղեցիներու առջև սրբան պատուոյ արժանի ըլլալն ալ ա մենուէն յայտնի բան մը պիտի ըլլայ :

## ԽՆԴԻՐ ԵՐԿՐՈՐԴ :

Գաւառակից Եպիսկոպոսաց ընտրութեան եղանակին վրայ :

Աս գանգատներու ուրիշ աւելի գլխաւոր պատճառ մ'ալ նոր Աթոռաց Եպիսկոպոսաներուն ընտրութեանը եղանակը եղած է, որպէս թէ Ազգայինը անոր մասնակից չեն եղած :

Հայրու լուրը Պօլիս հասած՝ թէ Սուրբ Աթոռը աս Վաւա-  
ւիս մէջ նոր Աթոռներ կանգնելէն ետքը՝ աս Աթոռներուս  
Եպիսկոպոսներն ալ ինքը սրոշած ու հաստատած է, ան տ-  
տենէն սկսելով հոս մէկէն սաստիկ փոթորիկ մը ելաւ, ու  
Սայրաքաղաքիս ժողովրդէն ոմանք մեծ շխոթութեան մէջ  
ձգեց, ու տեղ տեղ գանգառանաց ձայներ լսուելու սկսան՝  
Սուրբ Վահին ու աւելի Հասուն Վերապայծառին վրայօք,  
իբր թէ աս Վաւաւական Եպիսկոպոսներուն ընտրութիւնը  
ժողովրդեան Ազգային ընտրութեան իրաւանցը դէմ, ինչ-  
պէս կ'ըսէին, Սուրբ Աթոռին ձեռքը տուած, ազգային  
իրաւունքին անիրաւութիւն ըրած ըլլայ, զանի բռնաբա-  
րած, սորի տակ առած, ու ջնջելու ջանացած ըլլայ Հասուն  
Վերապայծառը. աս անտեղի գաղափարները մինչև այսօրս  
երթալով՝ առդիէն անդիէն յաճախօղ շինծու լուրերն ալ  
ժողովրդէն ոմանց վրայ աւելի տպաւորութիւն ըրին: Աւս-  
տի աս բանիս վրայ ալ 'ի սէր խաղաղութեան համառօտ՝  
բայց քանի մը էական խորհրդածութիւններ ընելը պատ-  
շաճ կը տեսնենք:

Պինդ առաջ զանի համարձակ խոստովանելու կ'ստիպինք,  
որ դեռ չենք կրնար հասկընալ, թէ ի՞նչ սրտածառաւ Վա-  
ւաւական Եպիսկոպոսաց աս կամ ան կերպ ընտրութիւնը  
Կ=Պօլսոյ ժողովուրդը շխոթութեան մէջ ձգած ըլլայ, ասոր  
վրայ շատ մտածեր ենք, թէ արդեօք աս բանիս մէջ սա ժո-  
ղովրդեան գանգառանաց ո՞ր իրաւացի պատճառ տրուած է  
և դեռ չենք հասկըցեր: Ինչու որ կը մտածենք թէ ի՞նչպէս  
ատ Վաւաւական Եպիսկոպոսաց ընտրութեան եղանակը  
քաղքիս Կաթողիկոսները կրնար դժամնել, որովհետև ո՞ր կա-  
նոնական իրաւունքը սորվեցուցած է, կամ ո՞ր եկեղեցական  
պատմութեան մէջ տեսնուած է, որ գաւառի մը ժողովուր-  
դը ուրիշ գաւառներուն, կամ Սայրաքաղաքի մը ժողովուր-  
դը կամ քահանայք Վաւաւական Աթոռներուն Եպիսկո-



պոսներուն ընտրութեանը իրաւամբ ու ըստ ինքեան մասնակից եղած ըլլան : Եկեղեցական սահմանադրութիւնը քաղաքական սահմանադրութեան նման չէ, անոր չի կրնար հետեիլ որ Վայրաքաղաք մը քաղաքական կարգի մէջ ուրիշ սահմանակից գաւառներէ աղնուազոյն գտնուելով՝ անոնց որ կամ որպիսի և իցէ եղանակաւ եկեղեցական գործքերուն ու իրողութեանցը խառնուի : ասանկ մտածելը եկեղեցական իրաւանց ինչ ըլլալը և քաղաքական իրաւունքներէն և սահմանադրութիւններէն որչափ տարբեր ըլլալը չհասկընալ կըցուցնէ : Արեւմն ո՞ր իրաւամբ կրնար քաղքիս ժողովուրդը Վաւառական Եպիսկոպոսաց ընտրութեանը մասնակից ըլլալ, ու չըլլալուն համար թէ Հասուն Վերապայծառը ու թէ Սուրբ Վահը բամբասել, աս անանկ անտեղի գանգատ մըն է որ նաև օտարազգի եկեղեցականներէն ու գիտուն աշխարհականներէն ալ երևելի անձինք շատ զարմանքի մէջ ձգեց :

Իսկ ոմանք՝ Վաւառական Եպիսկոպոսաց ընտրութեանը մասնակից ըլլալու իրենք իրաւունք չունենալնին գիտնալով՝ կը գանգատին թէ նոյն իսկ Վաւառներուն ժողովուրդն ալ՝ իրենց Եպիսկոպոսաց ընտրութեանը մասնակից չեղած Վաւառական Եպիսկոպոսները ընտրուեցան, ուստի աս եղանակաւ ան Վաւառաները գտնուող Ազգայնաց իրաւանց դէմ, ինչպէս կրտէին, գործք մը ըլլալով՝ աս գործքիս դէմ կը բողոքէին :

Իսկ աս պատճառիս ալ անհիմն ըլլալը հասկընալու համար պինգ առաջ ասի մտածելու է՝ որ դներք թէ ան տեղական ժողովուրդներուն ասոնց ընտրութիւնը ծանուցանել պէտք ըլլար, ու չըլլալուն համար գանգատելու նիւթ տրուած ըլլար, աս գանգատը Վաւառներուն ժողովուրդները ընելու էին, ու չէ թէ Վայրաքաղաքիս ժողովուրդը, որովհետև թէ ասով իրաւանց մէկ զևս մը կուղար նէ,

ան ժողովուրդներուն իրաւանցը հուգար եւ ոչ թէ Մայրաքաղաքիս, բայց ընդ հակառակն առ դաւառներուն ժողովուրդը իրենց Ապիսկոպոսներուն ընտրութեանը եւ զանակին վրայօրդանդատ մը չ'ընելէն ՚ի դատ՝ դատ գատ ու կրկին կրկին թէ ժողովրդէն ու թէ Վրդերէն ստորագրեալ ծանուցագիրներ խրկեր են, որով Սուրբ Աթոռին երախտագարս մտօք շնորհակալ եղեր են իրենց քաղաքները Ապիսկոպոսական Աթոռներ կանգնուելուն ու ան Աթոռներուն ալ առ արժանի անձանց ընտրուելուն վրայօր, ու բեմն թէ որ առ ինդրոյն վերաբերեալ անձինք բնաւ առ բանէս չեն գժտմընած, մանաւանդ որ շնորհակալ ըլլալու պատճառ են գտած, ի՞նչ իրաւամբք Մայրաքաղաքիս ժողովուրդը առ բանիս վրայ կրնայ գժտմնել, դանգատել, ու ամբաստանել մինչև զազդը ասանկ տակն ու վրայ ընել: Իրաւ է որ դաւառէ մը առ բանիս վրայօր ահաճութեան գիրեր գրուած էին, բայց առ գիրը մինակ մէկ դաւառէ մը ու ան դաւառին ալ մինակ քսնի մը անձինքներէն ստորագրուած ըլլալէն ՚ի դատ՝ ուղածնին պինդ առաջ իրենց Ակեղեցական կառավարութիւնը մասնաւոր ունայ յանձնուելն է եղեր, զորն որ չէ ընդունած Սուրբ Աթոռը, ու գանդատնին ալ չէ թէ իրենց Ապիսկոպոսին ըտրութեանը վրայօր է եղած, այլ մինակ իրենց քաղաքը Ապիսկոպոսական Աթոռ գրուելուն վրայօր: Այսպիսի գանդատանայ ալ ինչպիսի անընդունելի ըլլալը արդէն վերը բաւականաբար ծանուցինք:

Արկորդգ՝ առ ալ մտածելու է՝ որ ան դաւառներուն թէ ժողովուրդը ու թէ Վրդերը իրենց Ապիսկոպոսայ ընտրութեանը մասնակից եղած չ'ըլլարուն համար գանդատելու ալ բնաւ պատճառ չունէին, ինչու որ առ բանիս վրայօր ատոնց արտօնութիւն մը կամ շնորհք մը Սուրբ Աթոռէն մինչուկ հիմա եղած չ'ըլլալը ամենաւն յարոնի բան մըն է: Բայց եւ՛ս, իսկ որինաւ որ ստիպու թեան մ'ալ նշան ան տեղերը կ'ե-

րև այ, որովհետև ան գաւառներէն մէկ երկուքը բուն ագ-  
գային (չպիսիոպոսական) աթոռ ունեցած ըլլալին անգամ  
անյիշատակ ատենէ ՚ի վեր բնու չի գիտցուիր, ուստի ան  
տեղերը (չպիսիոպոս և չպիսիոպոսաց ընտրութիւն չըլլա-  
լով) անոնց և ոչ իսկ ժողովուրդը կամ Վրդերը այսպիսի ըն-  
տրութեանց սովորութեամբ մասնակցութիւն ունեցած կր-  
նան ըլլալ: Մէկալ քանի մը հասին ալ ատենօք համակոր-  
ծան դիպումսն երու պատճառաւ ՚ի դարուց հետէ Աթոռ-  
ները ընջուելով՝ որ և իցէ ընտրութեան եզանակն ալ ան-  
հետ եղաւ. ու այսպէս ան գաւառներուն սա բանիս մէջ  
հողն ու խնամածութիւնը Սուրբ Վահին ընդհանուր հոգա-  
ցողութեան տակը ըստ ամենայնի ինկաւ, ինչու որ ինչպէս  
վերը ըսինք կանոնական իրաւանց նպելով՝ տեղէ մը Վահա-  
նայսպետական Վասակարգութիւնը պահելուն պէս՝ որ և  
իցէ եզանակաւ, ան ատեն մինչուկ որ սուրբ Աթոռէն նոր  
սահմանագրութեամբ մը հան տեղի (չպիսիոպոսաց) ընտրու-  
թեան եզանակը չ'որոշուի մինչուկ անատեն սա ընտրութեան  
գործքը Սրբազան Հօր կը վերաբերուի իբր Վրստայ ընդհա-  
նուր (չկեղեցւոյ և աղբեր համօրէն եկեղեցական իրաւա-  
տութեան: Ուստի ոչ օրինաւոր սովորութեան և ոչ իսկ  
Սուրբ Աթոռէն առատօժեռնած արտօնութեան նշան մը  
ան Վաւառներուն մէջ տեսնուելուն համար, չէին կրնար  
իրաւամբ ան ժողովուրդները իրենց (չպիսիոպոսաց) Սուրբ  
Աթոռէն ուղղակի ընտրուելուն վրայօք գժամնել, բայց  
Սուրբ Աթոռին ըրածին պէտք էր գլխովին յանձնառու ըլ-  
լալ, ինչպէս ալ շատ դովութեամբ ըրին:

Երրորդ՝ մտածելու է՝ որ ան Վաւառներուն համար ու-  
ուաջին (չպիսիոպոսաց) ընտրութիւնն էր, որուն մէջ Սուրբ  
Վահը շատ գոյշ եղած է ամէն ատեն ու ամէն տեղ նաև  
Արեւելեան կողմերը մանաւանդ Վահանայսպետական Վա-  
սակարգութիւն մը սահմանելու ժամանակ՝ անունկ որ նոր

Աթոռներու առաջին Ապիսկոպոսները ընտրուելու ատեն՝ Սուրբ Աթոռ անոնք իրեն մասնաւոր եղանակաւ սեպհահանած է, ան թէ՛մերուն և մանաւանդ ան Ապիսկոպոսական Վատարգութեան ՚ի սկզբանէ ըստ եկեղեցական կանոնաց սրտաշաճ կերպով աղէկ հիմնուելնուն համար, ուստի Սուրբ Վահն ալ իրեն ընդհանուր հոգացողութեան սրտորը ճիշդ կատարելու համար՝ աս բանս առանձին եղանակաւ մը իրեն սեպհահանած է :

Ուրեմն պէտք է խոստովանել թէ աս Ապիսկոպոսաց ընտրութեան եղանակը, և ոչ իսկ Վաւառաց Ազգակից ժողովոգններուն որ և իցէ իրաւանցը դպչած ըլլալով՝ մայրաքաղաքիս ժողովուրդը չէր կրնար բնաւ և ոչ իսկ զանոնք պաշտպանելու պատճառանքով ամբաստանել ու ևս տաւել նոյն առթիւ Եկեղեցւոյ դիւան որ սկզբունքներուն դէմ գժտմնել ու Ազգը շիտթել :

Ոմանց ալ դժարը եկածը ըստ ինքեան Վաւառական Ապիսկոպոսաց ընտրութեան եղանակը չէ, այլ ան է՝ որ Սուրբ Աթոռին աս վարմունքովը կարծեն որ չըլլայ թէ աս եկեղեցական կարգադրութիւններու առիթովը Կ=Պօլոյ ժողովոգեան՝ ինչպէս կրտեն՝ մինչուկ հիմա ունեցած իր Ասիադահները ընտրելու իրաւունքը երթալով վերցուի, ու ոչինչ ըլլայ, աս բանիս առջը առնելու համար ատ դանգատները ըլին, ու ատ ապօրինաւոր ընթացքով վարուեցան, մանաւանդ որ Հասուն Վերապայծառին ընտրութեան կերպէն ալ արդէն աս կը գուշակուէր կոր, կ'ըսէին :

Աս իրաւացի կարծուած պատճառին ալ ինչչափ անհիմն ըլլալը վերը ըսածներնէս կը հասկցուի, վասն զի ինչպէս ըսինք Կ=Պօլոյ Ասիադահական Աթոռին կանգնումը քանի մը տարիէ ՚ի վեր Սուրբ Աթոռին շնորհած նոր մէկ սրբուհն է : Հնուց դարերէ առաջ աս քաղաքը ուրիշ ուղղաժառ Ազգերուն ունեցած իր և իցէ ընտրութեան սովո-

բութիւնը ու իրաւունքը Հայ Կաթողիկ ժողովրդեան յիշեալ Նախագահական նոր Աթոռը շնորհու ելովը ըստ ինքեան տրուած և շնորհուած չի սեպուիր, առ Սուրբ Աթոռին մասնաւոր հաճութեանը ու շնորհմանը կապուած գործք մընէ : Ա երբ նաև ըսինք որ Նախագահական Աթոռին սչ կանգնուելէն առաջ սչ ալ կանգնուելէն ետքը մինչև աս օրս առ սրբօժութիւնը Կ=Պօլսոյ ուղղափառ ժողովրդեան դեռ շնորհուած չէ : Իրաւ է, աս շնորհքը քանի մը անգամ Սուրբ Աթոռէն Ազգովին ինդրուեցաւ, բայց աս գրուած ազերացիւններուն վճռական սրտաստիան մը ինչպէս տեսնիք՝ դեռ չ'առնուեցաւ : Սբ Աթոռը խոտանացաւ, բայց իր խոտումը դեռ չի կատարեց : Ռատի ինչ պատճառաւ նախատես կ'ըրուէր որ Սուրբ Աթոռը ազգային օրինակ, որ ըսուած իրաւունքները պիտի ջնջէ վերցնէ, մանաւանդ թէ ըրած խոտաններ, և գործքի գրած միջոցներուն նայելով հակառակը ենթադրելու բաւական պատճառներ կային, ինչու որ աս մօտերս Սուրբ Աթոռին աս ըրած կարգադրութիւններէն ինչպէս ըսինք՝ կը հասկցուէր որ չէ թէ մինակ Պաւառներուն հաւատացեալները հոգալ էր, այլ և նոյն ատենուան մէջ ալ եկեղեցական կանոնաց ու մանաւանդ Մրևելեան Եկեղեցեաց սովորութեանցը ու սահմանադրութեանցը ու Ազգիս հոգեւոր յաջորութեանը յարմար մէկ կերպով մը աս Պաւառիս ալ վերջապէս ընտրութեան եզանակ մը կարգել էր : և իրօք ալ մինչև հիմա կարգած էր, բայց Սուրբ Աթոռին աս մտքիս վրայ եղած ատենը՝ մէկէն հոս տեղի ժողովրդէն ոմանք աս նախապատրաստութիւնները իրենց իբր վիստակար սեպելով՝ անոնց դէմ գանդատելուն՝ անոնց դէմ խօսելուն համար Սուրբ Պահն ալ երախտագիտութեան նշաններ տեսնելու տեղ՝ փոխարէն աս ապերախտութիւնը տեսած ըլլալուն համար աս քանիս վրայ ժողովուրդը ըստ կարի հաճեցնելու պատրաստած գործողութիւնները գաղբեցուց, ինչու որ Սուրբ

Գահը՝ բանի և ոչ մէկուն բան մը կը շնորհէ, բայց միայն անոնց որ այսպիսի շնորհքներու զիրենք արժանի կըրուցնեն որդիական սիրով և բարեյօժար յանձնառութեամբ : Եւ կը յուսամք որ նոյն գործողութիւնները ետքէն ձեռք առած ըլլալով արդէն ըրած խոտման յարմար Եպիսկոպոսաց ընտրութեան պատշաճ եղանակ մը մօտերս կ'որոշէ և կը կարգէ :

Ահա առ ամբաստանութեանց վրայ պէտք եղած բացատրութիւնները, ահա Եպիսկոպոսաց և Եպիսկոպոսական Գատարգութեան դրուելուն պատճառները, ալ ամենքնուս կ'իյնայ որդիական հպատակութեամբ և երախտագիտութեամբ վարուիլ, և Սուրբ Աթոռին բարերար խնամակալութեանը շնորհակալ ըլլալ :

## ՅՕԴՈՒՆԾԵՐԻՐՈՒԿ

Այլեւայլ ամբաստանութիւններու վրայ :

Յիշեալ տետրակին հեղինակը կ'աշխատի ասդիէն անդիէն այլ և այլ ամբաստանութիւններ հաւաքել, և յարմար կամ անյարմար բանիմը չի նկատած՝ զանոնք ուղածին պէս նկարագրելով և ձևացունելով մէկ զմէկու վրայ կը դիպէ : Ատոնց ամենուն վրայ մի ըստ միով զատ զատ խօսելու պատշաճ չենք տեսնար, վասն զի շատերը ըստ ինքեան ալ կը հերքուին, և ոչ խորհրդածութեան կարօտ են, այլ նոյն հեղինակին երևելի ենթադրած քանի մը ամբաստանութիւնը աս յօդուածիս մէջ կը բովանդակենք, ու համառօտ քանի մը խորհրդածութիւն կընենք :

Ամբաստանողը կ'ըսէ թէ Հասուն Գերապայծառը Ազգին հազար հինգ հարիւր տարուան արարողութիւնները, ճէ-

սերը, կանոնները տակն ու վրայ բերելու գիտաւորութիւն  
ունի, ազգը լատինացունել կ'ուզէ և այլն: Իրաւցնէ՛ աս  
տեսորակին հեղինակին արժանի գանգատ: Բայց ուսկէ՞ց կը  
մակարերէ զանի: Հասուն Վերապայծառին ո՞ր գործքը ար-  
դեօք ազգային ծէսերը, արարողութիւնները, և կանոննե-  
րը աւերելու ետեէ ըլլալուն նշան է: Մենք ամենն ին անոր  
այնպիսի գործը չի տեսնք, թէ և Հասուն Վերապայծառը  
չի բամբասուած և բամբասուելէն ետքն ալ մինչև հիմա  
ղինքը լաւ կը շանչնանք, և իր գործքն ալ կը տեսնենք,  
խօսքն ալ յաճախ կը լսենք. բայց մեր ծանօթութիւններ-  
նէս՝ տեսածնէս՝ և լսածնէս ուրիշ բան չենք կրնար հե-  
տեցնել՝ եթէ ոչ՝ թէ նոյն Հասուն Վերապայծառը Մղղին  
ծէսերուն և արարողութիւններուն, և կանոններուն աւել-  
լի բանաւոր նախանձախնդիր է. քան թէ նոյն իսկ բամբա-  
սողները: Արնանք յիշել եկեղեցական պաշտամունքներու և  
հանդէսներու, և հրապարակաւ եղած գործքերու վրայօք  
իրեն ջանքն ու յարատեութիւնը որպէս զի ազգային ծէսե-  
րը և արարողութիւնները պահուին և ամմէնն ալ համա-  
ձայն՝ և հրապարակաւ գործադրուին: Արնանք յիշել անոր  
մանաւոր ջանքովը ամմէն կարգէ և հմուտ անձինքներէ  
կազմեալ Ակեղեցական ժողովք մը, որուն իր վաւերական  
կանգսկարը յանձնեց և կրկին կրկին ստիպեց որ հոգ առ-  
նին Ակեղեցւոյ պաշտամունքները ըստ ազգային սովորու-  
թեանց և արարողութեանց համաձայնեն և կանոնադրու-  
թեամբ պաշտպանեն որպէս զի Ակեղեցականք երբէք ըստ  
իւրեանց հաճոյից չի կարենան զանոնք փոխել և այլայլել:  
Նմանապէս կրնանք յիշել Հասուն Վերապայծառին հրա-  
պարակական փոյթն ու աշխատանքը որ և իցէ Ակեղեցական  
սոնախմբութիւններու հանդէսներու, և Վահանայապե-  
տական պաշտամունքներու մէջ, ու մանաւանդ Վահանայից  
և Ապիսկոպոսոյ ձեռնագրութեան ժամանակը որպէս զի

ստ երևելի հանդիսութեանց ազգային արարողութիւնները և ծէսերը հրապարակաւ և ճիշտ կատարուին, ստոր համար կրկին կրկին պատրաստութիւնները, սխառուորաց կարգադրուիլը, և մանրամասն ամէն պարագաներու կատարուելուն ջանքն ու աշխատանքը: Արնանք յիշել նաև քանի մը տարի առաջ Հատուն Վերապայծառին կրած քրտնաջան աշխատանքը որով եւ Հռովմ երթալով ամէն ճիգն ու ջանքը դործքի դրաւ, որպէս զի ազգայինք իրենց արարողութիւնները չի թողուն՝ ազգայնութենէ չի կարենան հրոժարիլ, և չի լատինանան, ինչպէս որ շատ գովութեամբ ալ կատարեց, և ստոր դործադրութեանը համար պատշաճ եղած Սուրբ Վահին հրամանադիրներն ալ ձեռք բերաւ, և պահպանութեանը միշտ հող տարաւ: Ահա ազգային արարողութեանց իբր աւերիչ, իբր զտղբ լատինացունելու ջանացող ամբատանեալ Հատուն Վերապայծառին դործքերը ազգային ծէսերուն և ազգայնութեանը վրայ:

Բայց ամբատանութեանց հեղինակը երբոր ծէս, արարողութիւն և ազգային հին սովորութիւն կ'ըսէ կ'երևայ թէ ուրիշ բան կը հասկընայ, աւելի բացատրելու չի համարձակիր, այսինքն՝ Ապիսկոպոսաց ընտրութիւնը, և ժողովրդապետութեան կարգադրութիւնը՝ որոնց համար մասնաւորապէս կ'ըսէ թէ հողար հինգ հարիւր տորուան հին ծէսերնուս նոր սովորութիւն մը յարեց: Մակնն մենք վերը Ապիսկոպոսաց ընտրութեանը վրայ բաւական խօսած ըլլալնուս համար, հոս ժողովրդապետութեան վրայօր խօսինք:

Արևան կ'ըլլար հոս քննել թէ որ ծէսերնիս հողար հինգ հարիւր տորուան հնութիւնը ունին, թէ արդեօք ան ամէն ծէսերը որ հայաստանեաց Արևելային կը գործածէ բարբ ցոսորուան գործածուածին պէս չորտղբ դարան մէջը հաստատուեր են, թէ ետքը փոխախտութիւն չ'եղած ամենեւին, թէ անգերնուս այսչափ փոխախտութեանց և գրէթէ



չարունակ տառապանաց մէջ իր հին սովորու թիւնները ամ  
մէնն ալ միշտ և ճիշդ միօրինակ պահեց , և ոչ մէկը արդեօք  
չէ՞ կորսնցուցած , չէ՞ փոխուած , կամ թէ նոր ծէս ամենեկին  
չէ՞ մտած առնոց մէջ . ասոնք՝ կ'ըսեմ , քննել երկան կ'ըլլար .  
և ոչ ալ հարկաւ որ քննու թիւն մըն է ասիկ . վասն զի Հայաս-  
տանու եկեղեցւոց պատմութեանը նաև թերթ մը չի գիտ-  
ցողը՝ միայն հաղար հինգ հարիւր տարիին շրջանակը աչբին  
առջևը բերելու , կամ ազգային այնչափ փոփոխութեանց  
միտք դնելու ըլլայ՝ անշուշտ կը մակաբերէ որ իրաւցընէ  
չափէն աւելի մեծաբանութիւն մըն է ըսելը թէ Հայոց Ե-  
կեղեցական ծէսերը հաղար հինգ հարիւր տարիէն մինչև  
Հասուն Գերապոյծաօին ժամանակը միօրինակ անփոփոխ  
եկեր հասեր են , և ասի զանոնք տակն ու վրայ կը բերէ :

Բայց ասիկ ալ մէկ գի թողով՝ նախ և առաջ գիտնալու  
է որ ժողովրդապետաց կարգադրութիւնը՝ որոնց գուցէ  
տգիտաբար՝ Հեղինակը Բարօճեա անուն կ'ուտայ , Հասուն  
Գերապոյծաօին գործքը չէ , այլ Սիդեանց Արքեպիսկոպոսի  
Առաքելական Քննիչի Գեր . Ծերրիչիքիին , որն որ 1848 ին  
Սրբազան Քահանայապետին կողմանէ կ'Պօլիս գալով Քալ-  
հանայից և ժողովողեան գանդատներէն հասկըցաւ և տե-  
սաւ որ հաւատացեալներուն հոգւոց հոգը ըստ բաւական  
նին չէր ինձամուած և կարգադրուած , Քահանայք հաւա-  
տացելոց ամմէն մէկուն վրայօք , ինչպէս կ'ըսէին , ՚ի մա-  
նաւորի պարտաւորած չ'ըլլալով ՚ի սեպհական սրաշածնէ ,  
ու ստիժումածեց և եկեղեցականաց հետ ալ խորհրդակցելէն  
ետե , անոնց ալ հաւանութեամբը , և ոմանց ալ ստիպման-  
քը , ( զորոնք ամբատանութեանց տեւորակին հեղինակն ալ  
կարծենք որ գիտէ ) , ժողովրդապետութիւնը կարգադրելոյ՝  
որչափ կարելի էր յարմարցընելով զանի ժողովողին հոյևար  
հարկաւորութեանցը , և արդին հանդամանացը , ինչպէս  
նոյն ինքն Առաքելական Քննիչը ան առնն բոլոր Գղերին  
ժողովքին մէջ յայտնեց և հրատարակեց , զորն որ ետքը

Սուրբ Աթոռն ալ հաստատեց : Առաքելական Քննիչին առ գործադրութիւնը կը յայտնէ նաև ինք իր ստորագրութեամբը Հատուն Վերապայծառին գրած նամակին մէջ, որուն թարգմանութիւնը ամեն Նկեղեցիներնուս աւանդատունները հինգ տարիէն ՚ի վեր գրուած կը կենան որոնց մէկ երկուքն ալ անյուսալի փորձանաց հանդիպեցան . և չենք կտրծեր որ մեր հեղինակը ան թուղթը տեսած չ'ըլլայ : Ինչպէս կ'ենթադրուի որ տեսած չ'ըլլայ . միթէ՛ հինգ տարիէ ՚ի վեր եկեղեցի չէ՞ գնացած , աւանդատուն չէ՞ մըտած՝ ան որ . . . . սպա թէ ոչ՝ աւանդատնէն այսբան հեռու ինչպէ՞ս կը համարձակի Նկեղեցւոյ , Արարողութեանց, Օխոխց , Քահանայից , Եպիսկոպոսաց վրայ պոչափ ծանր դատողութիւններ և մեղանդանքներ ընել :

Սակայն և ոչ նոր սոլորոթիւն մ'է ասիկ . վասն զի ինչպէս նոյն Առաքելական Քննիչը յիշեալ նամակին մէջ կ'ըսէ , Արևելեան Նկեղեցւոյ մէջ ժողովրդապետները կամ թէ բռնեք Օխատերերը նոր բան մը չեն՝ թէև ժողովրդին և տեղեաց պարագաներուն համար սակաւ ինչ նիւթական տարբերութիւն ալ երևայ : Խօսքերնուս ասացոյցը ամենուն աչացը չ'ուզին է՝ նային Արևելեան աղբերուն հոգաբարձութեան գործողութիւնները . քննեն Օխատերերուն պաշտօնը , որոնք թաղ թաղ կամ տուն տուն իրենց բաժնուած և իրենց սեպհականամ պաշտօն ունին , և հոգւոց այնպիսի աւանձնական հոգ կը տանին որպէս զի ուրիշ քահանայ մը որեւիցէ պատճառաւ առանց Օխատեր քահանայի հրամանին և ոչ սոսկ խոստովանութեան խորհուրդը՝ որն որ մեր մէջը բողբոլին ազատ է , կրնայ կատարել : Արեմն ի՞նչ չու կ'ամբաստանուի ժողովրդապետաց պաշտօնը , և ժողովրդապետութիւնը :

Բայց յայտնի է որ մեր հեղինակը իրաւի և յանիրաւի Հատուն Վերապայծառը ամբաստանել կ'ուզէ : Ասան զի յիշել

չուղեր որ ատ ժողովրդապետութեան կամ թէ Հոգաբարձութեան գործողութիւնը Հասուն Գերապայծառէն առաջ ալ սկսած էր : Ի ռուսահոգի Նուրիճան Նախագահ Գերապայծառը Սամաթիոյ վիճակին՝ քանի մը սրատառներու համար՝ ան ժողովրդին աղաչանացը ղեջանելով ատոնց Նիկեղեցւոյն մեծաւոր վարդապետին յանձներ էր նոյն ժողովրդին հոգաբարձութիւնը և գրէ թէ բոլոր ան կարգադրութեամբ և պարագաններով, որով վերցիլչեալ ժողովրդապետութիւնը կարգադրուած է այսօրուան օրս . ինչպէս նորին Նուրիճան Գերապայծառին ան կոնդակը յայտնի կը ցուցնէ, բայց ատ հոգաբարձութիւն՝ ժողովրդապետի անուն չէր տրուած և ոչ ատ սրաշտոնին՝ ժողովրդապետութեան անուն՝ թէպէտ և գործքը և պաշտօնը նոյն էր : Կը թողունք սւրիշ ատ սրաշտոնի գործողութիւններուն օրինակները . և կը յիշենք միայն որ Ի ռուսահոգի Սարուշ Գերապայծառն ալ նոյն ժողովրդապետութիւնը կարգաւորեր էր Ասիոյ կողմերը դաւառի մը մէջ և ատ կարգադրութենէ Քահանայք և աշխարհականք եւեւրք գոհ են եղած իրենց հոգաբարձութիւնը ատով լախնամուտելուն համար : Ուստի միթէ՞ այժմ նոյն գործողութիւնը յանցանք սեպուելու է Հասուն Գերապայծառին, որ իր Նախորդներուն օրինակէն և աւելի ևս Առաքելական Քննիչին հրամանէ, և հաւատացելոց բարիօք խնամատարութեան պարտքէն տոխպեալ Սուրբ Աթոռին կամուցը յարմար վարուեր է, որուն համար մանաւանդ խեղճ և աղքատ ժողովուրդը իր ատ հոգաբարձութիւնը ժողովրդապետներուն և Հոգաբարձուներուն բարեկարգ և յարատեւ ջանիւքը աղեկ խնամուած ըլլալով՝ միշտ իր գոհութիւնը կը յայտնէ և կը ցուցնէ :

Օտարական բան մ'է հեղինակին նաև ան ըտանք թէ ժողովրդապետներուն գլխաւոր գործն է հոգեվարքներու քով կտակնին շինել : Այսն ղի չէ թէ միայն ժողովրդապետներն

բուն գործքը չէ աս, ալ մանաւանդ արդէն անոնց և հագարարձուներուն արգելումս է աս գործքը, հաւատացեալներէն կտակ շինել ուղղները ազգային փոխանորդ Ապիսկոպոսներուն ժամանակները, և ետքն ալ Տարեյիշատակ Նուրիճան Գերապոյճառին, և Մարուշ Գերապոյճառին ժամանակները ինչ կերպով և եղանակաւ և ճամբով կ'ըլլար նէ՝ նոյն կերպով նաև կը շարունակուի Հասուն Գերապոյճառին ալ օրովը :

Հեղինակը ուրիշ ամբաստանութիւն մ'ալ յառաջ կը բերէ համազգեսաց ընկերութեան վրայօք : Բայց ատոր արդէն ճշմարտակէր անկէ ճը հրատարակուած պատասխանը տրուած ըլլալով զանի կրկնելը պատշաճ չենք տեսնար, խաղաղասէր անձինք կրնան զանի կարդալ և բուն իրաց որպիսութիւնը հասկընալ : Միայն սո կ'աւելցունենք որ Տարեյիշատակ Մարուշ Նախագահ Գերապոյճառը արդէն նոյն ընկերութեան վրայ, ինչպէս դեռ կենդանի անձինք կը վրայեն, իր տհաճութիւնը ցրցուցեր է : Վմանապէս նոյն տհաճութիւնը յայտնեք է նաև ատոր վրայօք նորին Մարուշ Գերապոյճառին բրած Բահանայից և կրօնաւորաց ժողովքը : Նաև ան ատենները Ազդային խնամատար Անուահանաց ժողովքը, և ուրիշ քանի մը Ակեղեցական ժողովքներէն զատ, 39 Բահանայից ստորագրութեամբը տրուած բողոքի թուղթը, անկէց զստ Սրբազան Բահանայապետին կողմանէ Առաքելական Քննիչի Միդենոյ Արքեպիսկոպոսի Գեր. Ֆերրիէրիին պատասխանները նոյն տհաճութիւնը ցրցուցեր են, Եւ վերջապէս երբոր ընկերութենէ ոմանք ասոնցմէ գոհ չըլլալով Սուրբ Աթոռին բողոքեցին՝ Սրբազան Հայրն ալ ազգային միաբաններէ և ուրիշներէ ալ առնուած տեղեկութիւններով Սուրբ Դողովքին դատմանը յանձնեց, անոր տհաճութեան որսչումը Սրբազան Հօրմէ հաստատուելով վերջապէս հրատարակեցաւ : Ու թէպէտև

Սուրբ Աթոռին պատասխանը երկինալով՝ ժողովուրդեան մէջ ծագած անհաճելի դիպուածներուն առաջը առնելու համար՝ Հատուն Գերապայծառը ատ ընկերութեան վրայօք քանի մը փոփոխութիւն ընելով զանի ընդունելու յանձն առաւ, բայց երբոր տեսաւ Սուրբ Աթոռին որոշումը, որով եղած փոփոխութիւններն ալ քննուելով ատ ընկերութեան վրայ տհաճութիւնը կը ցուցնէ և զանի կը մերժէ, և իրեն ալ կը հրամայէ որ իր խնամոցը յանձնուած հաւատացեալները ատ ընկերութեան ձեռնտու չըլլան, ինք՝ որպէս նաև ուրիշ որ և իցէ Ապիսիօսպոս, Պատրիարք, Աղկղէցական և աշխարհական պարտական էր Սուրբ Աթոռին վճռոյն և հրամանին հնազանդիլ, և անոր հնազանդ ըլլալուն համար ոչ մէկը իրաւունք կ'ըրնայ ունենալ զանգատ ընելու և զանի ամբաստանելու՝ մանաւանդ որ Սուրբ Աթոռին որոշումը, և պատասխանը նոյն իսկ ընկերութեան կողմնակիցները ուղեցին անոր մասնաւոր բողոք ընելով: Ուրեմն ի՛նչպէս կ'ըրնայ ըսուիլ որ ազգային յառաջադիմութիւնը արդելելու համար էր Հատուն Գերապայծառին ատ ընկերութեան ընդդիմութիւնը՝ երբոր բուն ատ ընկերութեան բնաւորութիւնը, իր բարեյիշատակ Նախորդին տհաճութիւնը, Աջնուականաց անհաճութիւնը, Գղերին զանգատները, Առաքելական Քննիչին դատումը և վերջապէս Սուրբ Աթոռին հրամանը այսպէս կը պահանջէին: Այս է ատ ամբաստանութեան համառօտ պատասխանը:

Օձնց կ'ընենք միւս ամբաստանութեան պատասխանը, իբր թէ Հատուն Գերապայծառը զոմանս բարձր դրան մատնած ըլլայ, վասն զի ատ անիրաւ և զբարտապահ ամբաստանութեանն ալ բողբոլիս անհիմն ըլլալը՝ նոյն հրատարակուած ժամանակը ոմանք բարձր դրան Պաշտօնատարներէն ստուգած ու հաստատած են, ինչպէս քանի քանի անձանց յայտնի է:

Օճանց կ'ընենք նաև ատ ամբաստանութիւնը, որով նոյն հեղինակը կ'ըսէ թէ Հասուն Գերապայծառը աղգին կանոնները ոտքի տակ կ'առնու : Այն զի ատոր անհիմն ըլլալը նաև անկից յայտնի է՝ որովհետև Հասուն Գերապայծառին գործքն ու պաշտօնը եկեղեցական և հոգևոր բաներու վրայ է : Այլ Աղգին կանոնները և գործողութիւնը՝ նաև Բարձրագոյն Վրան հրամանագրին նայելով՝ միայն Աղգին քաղաքական իրողութեանց կը վերաբերին, որոնց՝ ինչպէս գիտենք՝ Հասուն Գերապայծառը ամենևին միջամուխ ըլլալ չ'ուզէր :

Նմանապէս զանց կ'ընենք հեղինակին այլ և այլ անձոնի ամբաստանութիւնները, որոնք որչափ անհիմն ըլլալը ըստ ինքեան յայտնի է, և մինչև հիմա ըսածներնէս ալ կը հասկըցուի : Եւ ոչ պատշաճ կը տեսնենք նոյն հեղինակին մէկ զմէկու հակառակ ըսածները բաղդատելու, մանաւանդ ուր որ զՀասուն Գերապայծառը, և զգարողականաց մասը՝ առ հասարակ գիտութեան, կրթութեան, ուսման, գարողաց թշնամի և ատեցող բամբաստելն ետքը՝ տղոց և աղջկանց կրթութեանը համար ալ նոյն Հասուն Գերապայծառին հիմնած գարողներուն վրայ կը խօսի, և Նորընթացի Խոմբ, և Կանգնած Թե՛ Ղենիբը ըսելով՝ զանոնք կը յիշէ : Ուրեմն հեղինակին խոստովանութեամբը ևս՝ գարողաց թշնամի, և գիտութեանց, կրթութեան, ուսման ատեցող ըսուած Հասուն Գերապայծառը գիտութեան, կրթութեան, ուսման գարողներ կամ ինչպէս նոյն հեղինակը կ'ըսէ Թե՛ Ղենիբ կանգններ է : Եւ իրաւի Հասուն Գերապայծառին կառուցած և բարեխնամ Տէրութեան Արքայական հրովարտակաւ բացուած ու հաստատուած Նախագահական Արժարանին արդէն կանգնուած ժամանակը հրատարակուած յայտարարութիւնը, և ատոր կանոնները բացարձակ կը յրջունեն և գործադրութիւնն ալ կը հաստատէ որ ատ վարժարանին վախճանը թէ՛ Քահանայացու թէ՛ աշխարհական տղաքը

կրթելու համար, և իրենց վիճակին հարկաւոր և օգտակար եղած ուսմունքը, գիտութիւնները, հմուտութիւնները, և այլ և այլ լեզուները, մանաւանդ՝ ոմանց սա դպրոցականաց մասին իբր ատելի հրատարակած Ազգային լեզուն, և ուսմունքը սորվեցնելու համար է: Առկէց զտո նոյն Հասուն Վերապայծառին կանգնած աղջկանց վարժարանին մեջ ալ շարունակ երկու հարիւրէն աւելի թէ աղքատ աւ թէ արհեստաւորաց աղջիկները կը կրթութիւն քրիստոնէաբար և կը սորվին իրենց վիճակին յարմար բաները: Այս վարժարաններուն հիմնադրութիւնը, յառաջադիմութիւնը, և օգուտը քննող սր և իցէ անկողմնասէր ազգայնոյ մը սիրտը կարծեմք թէ բաւական պատճառ մը կ'ունենայ զինքը և ժողովուրդը Հասուն Վերապայծառին երախտապարտ ճանչնալու, թէ և սա Վերապայծառը աղբիս ամենեկին ուրիշ՝ աղէկութիւն մը նաև ըրած չ'ըլար: Ուրեմն յիշեալ տետրակին հեղինակէն այսչափ դառն բամբասանօք զրպարտուած Ապիսկոպոսապետը, և իրեն համամտ և գործակից վարդապետները ոչ թէ կ'ատեն ուսմունքը, գիտութիւնները, կրթութիւնը, և դպրոցները, այլ ընդ հակառակն ասոնց յարգը՝ աղէկ ճանչնալով իրենց բոլոր ջանքովը կ'աշխատին որ ազգը ուսմանց և կրթութեանց բարիքովը առաւել ևս լեցուի, օրէ օր ոչ միայն բարի և հմուտ եկեղեցականներ հասցնելով, այլ նաև բարեպաշտ՝ առաքինի և գիտուն զաւակներ օրէ օր աւելի տեսնուելով հասարակութիւնը ուրախանայ: Ահա գիտութեան և կրթութեան իբր թշնամի բամբասուող Հասուն Վերապայծառին և իր գործակիցներուն ջանքն ու գործքը:

Բայց խօսակցութիւննիս համառօտենք և հեղինակին ըրած ծանր ամբաստանութեան մ'ալ՝ վրայ քանի մը խօսք զրուցենք: Պատրիարքարանի պարտքին, Ազգային եկեղեցեաց եկամուտներու, և այլ բարեպաշտական տեղեաց եղած տուրքերու վրայ հեղինակը այնպէս կը խօսի՝ իբր թէ

Հասուն Վերապայծառը զաննք յափշտակած ըլլայ, կամ ան պարտքերը ինք ըրած ըլլայ: Այստե՛ս, ի՛նչ ժամանակներու ենք հասեր որ այսպիսի զրպարտութիւններու ալ պատասխան տալու կը ստիպուի ինք: Ասի և առաջ գիտնալու է որ Հասուն Վերապայծառը քաղաքական Պատրիարգ եղած ատենը Պատրիարգարանը հազար տասըրկի չափ պարտք ունէր՝ ատոր ջանքովը քանի մը աղբօղբուտ աղնուականներ միաբանեցան կերպով մը ատ պարտքը վերուցին, և երեք տարի ու կէս իր Պատրիարգական պաշտօնին ժամանակը Ազգին ծախքերը արժանապէս հոգացուելով ատ պաշտօնը թող տուած ժամանակը ամենեկին պարտք չի թողուց: Աստի հիմնական եղած Պատրիարգարանի պարտքը անոր ժամանակէն ետքը եղած է: Այլ աս ալ մտածելու է որ ինչպէս Պատրիարգարանի հաշիւը ո՛չ երբէք Պատրիարգներու ձեռքն էր, նմանապէս նաև Եկեղեցեաց, և աղքատաց ելլածուտքի հաշիւը ո՛չ երբէք Հասուն Վերապայծառին, և ո՛չ երբէք ուրիշ Եպիսկոպոսներուն ձեռքն եղած է, այլ ատոնց ջանքովը արգարատէր, բարեպաշտ, հաւատարիմ և բոլոր ազգին հաւնած աշխարհական անձինքներու ձեռքն է եղած միշտ և առ ժամն ալ, որոնք ուղուած ատենը՝ ինչպէս Ասխաղահ Արքեպիսկոպոսներուն, նոյնպէս ալ Ազգին հաշիւնին ցուցքնելու պատրատտ եղածնին միշտ իմաց տուեր են: Այլ աս բուն և ճիշդ իրաց որպիսութիւնը ամենուն յայտնի և հրապարակական գործք մը ըլլալով՝ կը զարմանա՞նք ինչպէ՛ս ամբաստանութեանց հեղինակը այնպիսի թշնամական զրպարտութիւն մը ընելու կը համարձակի:

Հեղինակին ան ամբաստանութիւնները որ կ'ընէ իբր թէ Հասուն Վերապայծառը, և իւր մտերիմները կը ջանան միխթարեանց վանքը կործանելու, կրօնա որները ջնջելու և այլ ասոնց նման թշնամական ամբաստանութիւնները որչափ անհիմն ըլլալը արդէն ամօ՞ննուն յայտնի ըլլալուն



համար, և ոչ պատասխանի արժանի կը տեսնենք զանոնք՝ զլան զի աղէկ գիտենք ատոնք Հասուն Վերապայծառին, և իրեն մտերիմներուն կամքին, և դիտաւորութեան դէմ գանգաւաներ ըլլալը ։

Մանապէս այլ ամբաստանութիւն մ'ալ կ'ըլլայ՝ որն որ պնտճառուած է թէ աշխարհական թէ կրօնաւոր Վեղերին զրոյքը Սուրբ Աթոռին ըրած քանի մը կարգադրութիւններուն Հասուն Վերապայծառին համաձայն վարուելէն ։ Այս նիւթիս զրոյ ալ երկան չենք խօսիր, որն որ միայն և առանձին Վեղերին և ոչ թէ ժողովրդին վերաբերեալ բան մըն է, ըսել կուզենք որ Եկեղեցական կանոնաց յարմար սահմանուած կանոնադրութիւնները՝ Վեղերին բարիք կարգադրութեանը ու կրթութեանը, ու Եկեղեցւոյ սլաւոյն ու հաւատացելոյ հոգևոր աղէկութեանը յարմար եղանակաւ վարուելուն համար են ։ Երբ որ Եկեղեցականք իրենց ինկած սրբաբերնին ճշդիւ կը կատարեն, երբ որ հաւատացելոյ կրօնական յառաջադիմութեանը ըստ արժանւոյն գործակից կ'ըլլան, երբ որ Եկեղեցին գոհ ընելու եղանակաւ կը վարուին, ասիկա ոչ մէկուն դժարը գալու, այլ մանաւանդ զամէնն ալ մխիթարելու և հաճեցնելու է ։ Ատ կարգադրութիւններուն, ատ վարմունքին միտքն ու վախճանը աս է, այսինքն Եկեղեցականները աւելի առաքինի ընել, անոնց վարքը աւելի կարգաւորել, զանոնք ամենուն օգտին համար իրենց Եկեղեցական պաշտօններուն միշտ օգտակար կերպով մը ստարակիլ տալ, ամէնքը իրենց առանձին վիճակին ու պաշտամանցը ու իրենց կանոնաց համաձայն զբաղիլ տալ ։ Ամենուն յայտնի բան մըն է՝ որ Եկեղեցւոյ կանոնները ո՞ր և իցէ ատտիճանի՝ վիճակի, պաշտօնի եղող եկեղեցականաց ստարակմունքը, վարքը, հնազանդութիւնը, ու պարտքերը մէկիկ մէկիկ կ'որոշեն ու կը սահմանադրեն ։ Անոր համար Սուրբ Աթոռին պահանջածը, Եկեղեցական

կարգին վայլածը, ու Հատուն Գերասարյծաւին ըստ իւր պարտուցը բազմացածը՝ առ է որ Եկեղեցականք ամենն ալ իրենց սահմանները ճանչնան, իրենց պարտքերը կատարեն, մեծ ու պզտիկ իրենց չիլերաբերած բաներուն, մէկին մէկալին գործքին և պաշտօնին չի խառնուին, ամէնքը կանոններէ սահմանադրուած եղանակաւ վարուին, ամէնքը օրինաւոր իշխանութեանց հնազանդ ըլլան, ու ամէնքն ալ Եկեղեցւոյ և Ժողովրդին առջև անանկ կերպով մը վարուին, որ իրենց Սրբազան կարգին, պաշտօնին, ու պարտուցը վրայօք տրտուելի պատճառ չիտան, վերջապէս անանկ վարուին ինչպէս իրենց քահանայական վիճակը, իրենց կանոնները, եկեղեցական պարտքերը, Ժողովրդին հոգևոր աղէկութիւնը, ու անոնց վրայ ամենուն իրաւամբ ունեցած յարգն ու համարումը կ'ուզեն ու կը պահանջեն :

Ուստի Հատուն Գերասարյծաւին ջանքն ու աշխատանքը հչ թէ ջնջել ու կործանել է, այլ իւրաքանչիւր վիճակի Եկեղեցականները իրենց աստիճանին և Ժողովրդին օգտին յարմար օրինաւոր վարմունքով փութացունել է, և ո՛վ որ օտարտոյ մտածմունքներու կը հետևի նէ, իրեն և հասարակութեան վնասուքը մեծապէս կը սխալի :

Ահա առ ամբաստանութեանց զբարտաիչ հեղինակին առջափ համառօտ պատասխաննիս առ ժամն բաւական է՝ չի գիտցողներուն բուն իրաց որպիսութիւնը բացատրելու համար :

Դ Կ=Պօլս 1853 Յունիս

Վ. Տ. Օ. Ե.









3793

3680